


Ա. ԽԵԶԻԿՅԱՆ




ԱՎԵՏԻՔ ԻՍԱՅԱԿՅԱՆ



ՀԱՅԴԵՏՏՐԱՏ







891.99.099 [Հայություն]  
Ի. Ինձիկօսի  
Ի - 58

13 APR 2011

Կ

## ԱՎԵՏԻՔ ԻՍԱԿԱԿԵԱՆ

ԾԱՌՅԱՆ 65-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻԿ

Ծառայական ժողովուրդն է  
Բերանձն



## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայ գրական համաստեղության մշտավառ լուսատուներից է Ավետիք Իսահակյանը: Նա ներկայացուցիչն է այն փայլուն պլեադային, որ հանդիսանում է մեր գեղարվեստական խոսքի անթառամ փառքը: Ապրելով և ստեղծագործելով մեր օրերում, նա այն ոսկի օղակն է, որ այսօրվա ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական մեր գրականությունը կապում է մեր երկնազարամյա գրականությանն ու ողջ կուլտուրային:

Ավ. Իսահակյանը հայ ժողովրդի և նրա պատմության հարազատ ճնունդն է: Եվ, ինչպես Վ. Գ. Բելինսկին էր Պուչկինի մասին ասում, նրա հանդես գալը բացատրվում է մեր գրականության պատմությամբ:

Իսահակյանը ժառանգել և իր ստեղծագործության մեջ զարգացրել է հայ գրականության լավագույն տրադիցիաները—ժողովրդայնությունն ու հայրենասիրությունը, բարձր արվեստն ու կուլտուրան:

Իր սիրո երգեր—վերքերով Իսահակյանը խոսում է միջնադարի մեծ սիբերգուների՝ Մկ. Նաղաշի, Գր. Աղթամարցու և Քուչակի հետ:

Նա ժառանգել է Սայաթ-Նովայի սիրակեզ ու սիրահար սըտի կիրքն ու կըակը, Արովյանի վերքի



Ա. ԻՆԴՋИԿՅԱՆ

ԱՎԵՏԻԿ ԻՍԱԱԿՅԱՆ

Արմգիզ. Երևան, 1940 թ.

մըմուսն ու հայրենասիրական հուրը, Դուրյանի սիրատենչ սրտի վիշտն ու ազնիվ տրատևջքը: Նրա ստեղծագործությունը խոր արմատներով կապված է հայ ժողովրդի կուլտուրայի և գրականության հարաբատ հողին: Իր ժողովրդայնությամբ և բարձր արժեստով հսահակյանի ստեղծագործությունը հաղորդակցվում է ընդհանուր գրականության լավագույն ներկայացուցիչների հրաշակերտներին:

Իսահակյանի պոետիան ներդաշնակ համարությունն է Արևմուտքի և Արևելքի բանաստեղծական լրագույն տրադիցիաների: Նրա գրական ուսուցիչները և ուղեկիցները եղել են՝ Հայնեն ու Խայմը, Գյոթեն ու Հաֆելը, Արմոնտովն ու Շեվչենկոն:

Սակայն, Իսահակյանի ամենամեծ ուսուցիչը, Նրա ամենազորեղ ներշնչողը ժողովուրդն է եղել միշտ, որին հավատարիմ է մնացել նա որպես պոետ: Իր լավագույն հույզերով ու խոհերով միշտ եղել է ժողովրդի հետ ու նրանով ապրել:

Սուլթանիզմի և ցարիզմի կրկնակի լծերի տակ հեծող իր ժողովրդի վիշտը, անփոխադարձ և դժբախտ սիրո վիշտը, —որ սոցիալական վշտի արտահայտությունն էր, — Իսահակյանի ստեղծագործության մեջ հանդես էր գալիս «համաշխարհային վշտի» կերպարանքով:

Ում հետ եմ անհույս  
Լալիս, հառաջում,  
Ում ճակատի վըսա  
Իմ ձեռքն է հանգչում...

Լալիս է աշխարհն  
Իմ սիրող գըկում, —

Համայն աշխարհի  
Բախտն եմ ես սըգում...

Կարեկցությունն ու ջերմ սերը սոցիալական և քաղաքական դաժան կարգերի զոհերի՝ ռիյանքի խորթ տղերքի», ընկածների և արհամարհվածների նկատմամբ՝ հատկանշական է Ավետիք Իսահակյանի ստեղծագործությանը:

Իսահակյանը փիլիսոփա բանաստեղծ է, ինչպես և մեր ժողովուրդը: Նա սիրում, թախծում, հրաժում և փիլիսոփայում է իր իմաստուն ժողովրդի պես:

Իր զգայական ու խոհական աշխարհով, իր սրաով ու սիրով, իր ամբողջ եսով Իսահակյանը ձուլված է ժողովրդին: Վնա իր ջերմ ու զգայուն որտի ամբողջ ուժով սիրում է ժողովրդին, սակայն, բնավ չէ իդեալականացնում ժողովրդի տգիտությունը, հետամնացությունը: Ընդհակառակն, նա մոլի թշնամի է խավարի: Ցարեցմի բանտարին տիրապետության խավարում նա ձգտել է արևին՝ լույսն ու ազատությունը համարելով ամենալավ բաներն աշխարհում:

Իսահակյանի հոռետեսությունը, որ բղխում եր նրա սոցիալական վշտից, անհույս ու անհեռանկար չէր: Նա սիրո և կյանքի խանդավառ գովերգուն է: Նրա ամեն ինչ ժխտող Արու-Լալա-Մահարին էլ ի վերջո դեպի արևն է թռչում, որ կյանքի ու ամեն գոյության մայրաբիչն է: Զնայած երգել է մահն ու սիրո ողբերգությունը, այնուամենայնիվ նա տվել է կյանքի և սիրո հաղթանակը մահվան վրա («Անանդան ու մահը», «Համբերժական սիրը»):

Ժողովրդային իր ոճով Իսահակյանն աղքակից՝ Արովյանին:

Աբովյանով մեր գրականության պատմության մեջ  
լրացվեց մի նոր՝ սակեդար: Ժողովուրդը մտավ գրա-  
կանության մեջ և գրականությունը՝ ժողովրդի և մե-  
լով ժողովրդի ստեղծագործության զովացուցիչ կազ-  
դուրիչ անմահական ակունքներից, մեր գրականու-  
թյունը վերածնվեց, աճեց ու դարձացավ Դավթի նման:  
Եվ մեր գրականությունն այսուհետեւ իր հիմնական  
հոսանքով ընթացավ Աբովյանի բացած հունով:

Սակայն, Աբովյանական ուղղությունը հաղթանակ  
տարավ նախ և առաջ վեպում: Այս խնդրում Աբո-  
վյանն ունեցավ այնպիսի հետեղորդներ, ինչպես Դ. Ա-  
ղայան և Պ. Պոռշյան:

Թեև Հովհաննիսյանն սկսեց, բայց Աբովյա-  
նական ուղղության հաղթանակը մեր պոետիայում  
պատկեցին Հովհ. Թումանյանը և Ավ. Խաչակյանը:

Ժողովրդայնության հաղթանակը մեր գրակա-  
նության և ապա՝ երաժշտության մեջ (Կոմիտաս, Սպ.  
Մելիքյան, Ռ. Մելիքյան) մի կողմից ազգային ինք-  
նորոշման, ազգային կուլտուրայի շեշտումն էր ընդ-  
դեմ ցարելի վարած ազգաջինչ քաղաքականության—  
փոքր ժողովուրդների նկատմամբ, մյուս կողմից այն  
խորտակում էր ազգային սահմանափակության չի-  
նական պարիսապները և մեր ժողովրդին կատում  
հարևանների հետ՝ գետոկրատական-համարդիային  
բարձր գաղափարներով:

Ավ. Խաչակյանը հարազատ է մեր նոր գրակա-  
նության մեծ դրոշակակրին նաև իր ստեղծագործա-  
կան հոգեբանությամբ, իր սրաով ու սիրով, իր եր-  
գերով ու վերքերով:

Պոեղիայում Խաչակյանի անմիջական նախորդը  
մի կողմից Պ. Դուրյանն է, մյուս կողմից՝ Հովհ.

Հովհաննիսյանը: Վերջինիս ժողովրդային լիրիկայի  
գիծը զարգացնելով, Խաչակյանը գերազանցեց իր  
ուսուցչին՝ հասնելով զեղարքվեստական և փիլիսոփա-  
յական խոշոր ընդհանրացումների:

Պ. Դուրյանի «արտունջք»-ը՝ «Երկնքի հետ հպարտ  
թշնամանքը» (Լերմոնտով) Խաչակյանի մոտ ավելի  
շեշտված և ավելի անմիջական հանդես եկավ իրըև  
թշնամանք երկրի հետ՝ ուղղված տիրող հասարակա-  
կան-քաղաքական կարգերի դեմ: Խաչակյանը երկըն-  
քով չզբաղվեց էլ. երկինքը, Հայնեյի նման, թողեց  
թուշուններին ու հրեշտակներին: Սերն էլ սուրն էլ  
նա տեսավ երկրում և իր դայրույթի շանթերն ուղ-  
ղեց իրական թշնամիների դեմ:

Ինելով ժողովրդի սրտի և մտքի հարազատ թարգ-  
մանը, Խաչակյանը, ինչպես յուրաքանչյուր մեծ  
ստեղծագործող, ինքնատիպ է: Նրա յուրաքանչյուր  
տողը, նույնիսկ սակավաթիվ թարգմանություննե-  
րում, կրում է խաչակյանական դրոշմ: Հենց սկզբից  
ստեղծագործական եսը, բանաստեղծի իր ինքնու-  
թյունն այնքան ուժեղ է եղել Խաչակյանի մեջ, որ  
անգամ պատահնի՝ կուլ չի գնացել գրական աղղեցու-  
թյուններին: Հայնեյով ոգեսրվել է, բայց չի նման-  
վել չի ճգնել նմանվելու:

Հայնէն, բողոքով, ըմբռստ ու անհաշտ Հայնէն,  
այդ բանաստեղծ Պրոմեթեոսը իր հրաբխային տեմ-  
պերամենառվ սիրելի ու հարազատ էր Խաչակյանին,  
նրա նույնպես անհանդիսատ, նույնպես ըմբռստ ու  
անհաշտ նկարագրին: Հայնէն պատահնի Խաչակյանին  
մի առ ժամանակ ուղեկցել է՝ իրըև նրա գրական  
մտերիմն ու հարազատը:

Այդ նույն հոգեկցությունն ու հարազատությունը

դիտելի է նաև Հերմոնառվի և Իսահակյանի, ինչպես  
և Շեքենգոյի և Իսահակյանի միջև:

Իսահակյանը ստեղծագործական մեծ դիալազոն  
ունի.—սոցիալական չարիքը, անհավասարությունը,  
զրկողն ու զրիվողը, աղքային ճնշումն ու աղտաշ-  
մարտը, հայրենիքի ցավն ու սերը, սիրո վիշտն ու  
վայելքը, կյանքի ու մանվան պըսբլեմը, ցավն ու  
ծերությունը—մի խոսքով՝ մարդու իր բոլոր խոհերով  
ու հույզերով Իսահակյանի ստեղծագործության ա-  
ռարկան է:

Մեծ բանաստեղծի ստեղծագործական թոփչքը ար-  
համարհում է ժամանակ և ապրածություն—Աղամքը և  
Լիլթից մինչև Ուստա Կարոն, Շիրակի Ուան ամուց  
մինչև իտալացի Զիոլաննին, Արագածից մինչև Հի-  
մալայ, Ուրարտուի ժամանակներից մինչև սոցիալիս-  
տական աղատ Հայաստանը. հնդկական Բուդդան, չի-  
նական Լի—Թայի—Պոն, պարսկական Սատին, հրեա-  
կան Մովսեսը—մտնում են Իսահակյանի ընդգրկում-  
ների մեջ:

Իսահակյանը խոշոր կուլտուրայի տեր ստեղծա-  
գործող է: Նա սպունգի նման է ծծել անցյալի և իրեն  
ժամանակի կուլտուրան—ին հունական և հումեա-  
կան գրականությունն ու միֆոլոգիան. պարուկական  
և պատմությունն ու պոեզիան. հնդկական միֆոլոգիան. գերմա-  
նական, ֆրանսական, անգլիական, սուսական ժո-  
ղովուրդների գրականությունը, վիլխոսփայությունն  
ու պատմությունը; Նրա որոնող ու հետախույզ միտքը  
դրազել է մարդաբանության, աստղաբաշխության,  
բուսաբանության, լեզվաբանության և գիտության  
այլ բնագավառների առաջադրած պրոբլեմներով:

Իսահակյանը մեր գեղարվեստական խոսքի մեծ  
ուսուցիչներից և ստեղծողներից մեկն է: Իր  
գրական ուղեկիցների և գրչակիցների՝ Հովհա-  
նիսյանի, Հովհաննեսի, Դ. Աղայանի, Դ. Վա-  
րուժանի, Դր. Զոհրապի, Նար—Դոսի, Վ. Տերյանի հետ  
միասին նա հրաշակերտել է մեր գրական խոսքը՝  
հասցնելով այն գոհարակերտ բարձունքին, ուր մեր  
գրականության մյուս գլուխ-գործոցների կողքին  
գտնվում են «Երգեր ու վերքեր»-ը, «Լիլիթը», «Արու-  
կալա-Մահարին», «Սամա Մշերը»:

Նա հայ լեզվին տիրում է այնպես, ինչպես անա-  
պատի բեղվինը նետապեղին: Իսահակյանի լեզուն  
հարուստ է, բաղմաձայն, բազմաձև ու բազմաժանր:  
Լեզվի հարուստությամբ Իսահակյանն անգերազան-  
ցելի է մեր բանաստեղծների մեջ: Նրա լեզվական  
լայնածիր ընդգրկումների մեջ մտնում է հայերենն իր  
պատմության սկզբից մինչև օրս, աստվածաշնչի թարգ-  
մանությունից մինչև մեր այօրվա սոցիալիստական  
հայերենը:

Իսահակյանի ստեղծագործությունը ճշմարիտ ար-  
վեստի գրումն ունի իր վրա—սրտաբուխ է, անկեղծ  
ու վարակիչ: Երգերը ասես պոկտում են նրա որտից,  
և մաքուր, աղնիվ և հուղիչ են, ինչպես ժողովրդա-  
կան երգը, մայրական ջերմ խոսքը, մանկան վիշտն  
ու հրձվանքը:

Իր բարձր արվեստով Իսահակյանի ստեղծագոր-  
ծության նշանակությունը չի սահմանափակվում հայ  
գրականության շրջանակներում: Գեռաս 1916 թվին  
ուսւ նշանակոր բանաստեղծ Ալ Բլոկը գրում եր.  
«Поэт Исаакян—первоклассный; может быть такого  
гового светлого и непосредственного таланта во всей  
Европе нет».

Ժողովուրդների բանտ ցարական Ռուսաստանում  
մեծ բանաստեղծը տաննյակ տարիներ երազել է ազատ  
հայրենիքը:

Եվ եթե Խաչ, Աբովյանը, Միք. Նալբանդյանը,  
Դ. Աղայանը, Մուրացանը, Ծատուրյանը և մեր գրա-  
կանության ու հասարակական-դեմոկրատական մտքի  
լավագույն ներկայացուցիչները անմուրազ մեռան՝  
աղատ հայրենիքի տենչը սրտերում, ապա Խսահա-  
կյանը բախտ ունեցավ տեսնելու հայ ժողովրդի աղա-  
տագրումն ու քաղաքական վերածնունդը:

Եվ այսօր, իր սոցիալիստական աղատ հայրենի-  
քում մեծ բանաստեղծը երախտագիտությամբ ու  
ջերմ փայփայանքով գովերգում է ժողովուրդների մեծ  
աղատարար ընկեր Ստալինին կերտում է առաջադեմ  
և առաջավոր մարդկության հանճարեղ առաջնորդի՝  
Լենինի հերոսական կերպարը:

**Բ**անաստեղծը բնական և հասարակական կռնկրեա-  
միջավայրի, պատմական որոշ պայմանների ծնունդ  
է: Առանց նրա կյանքը, միջավայրն ու պատմական  
պայմաններն իմանալու, դժվար է հասկանալ ու մեկ-  
նաբանել նրա ստեղծագործությունը:

Արդ, ընդհանուր գծերով աենանք, թե ինչ ուզի-  
ներով է ընթացել Ավ. Խսահակյանի կյանքը:

Ավ. Խսահակյանը ծնվել է 1875 թվի հոկտեմբերի  
31-ին Ալեքսանդրապոլում (այժմ Լենինական): Ման-  
կությունն անցել է Ղաղարապատ գյուղում, Մանթաշի  
երազաբույր և լուսափիթիթ հովտում:

Մանուկ Խսահակյանը հաճախ եր գնում Արփաչայի  
ափի իրենց ջրաղացը, ուր հավատակությամբ լսում  
էր ծեր ջրաղացպանի պատմած հեքիաթները, առաս-  
պելներն ու երգերը:

Հայաստանի բորբ արևը, Մանթաշի երփիներանդ  
ծաղիկները, Արագածի աղամանդյա կատարին բեկ-  
վող կայծակնաթե թրերը, Արփաչայի շառաչը, նրա  
ջինջ ջրերի վրա թեքված հեղ ուրիշները, ծերերի

հրաշապատում հեքիաթներն ու լեզնդները, աշուղների թախծոս երգերն ու գեղջկուհիների զվարթ ջանգյուղումները վառեցին, բորբոքեցին նրա երևակայությունը՝ հետապայում գույն ու ըույթ տալով բանաստեղծի երգերին:

Դրել-կարգախն իսահակյանը սովորում է իրենց գյուղում, մի գրագետ կնոջ մոտ, ապա ընդունվում է Ալեքսանդրապոլի հայոց հոգեոր դպրոցը: Այսոեղ երկար չի մնում, որովհետև ցարական կառավարության հայահալած քաղաքականության հետևանքով փակում են հայկական դպրոցները: Այդ պատճառով էլ իսահակյանը փոխադրվում է Ալեքսանդրապոլի ոռոսական դպրոցը:

1889 թ. իսահակյանն ընդունվում է Գևորգյան ձեմարանը: Այսոեղ ընթերցասիրությունը կիրք է դառնում նրա մեջ, և կարգում է, ավելի ճիշտ՝ կլանում է, ինչ որ ձեռքն ընկնում է:

Շատ բնորոշ է, որ իսահակյանը դպրոցական հասակից խանդավառությամբ, հափշտակությամբ կարդում է մեր դեմոկրատական հեղինակների՝ Խ. Արովյանի, Միք. Նալբանդյանի, Ղ. Աղայանի, Պ. Պոռշյանի, Նար—Դոսի, Ծատուրյանի երկերը:

«12-13 տարեկան էի, երբ ձեռս անցավ «Սոս և Վարդիթեր» վեպը,—պատմում է բանաստեղծը: Այս տողերը գրելիս վերապրում եմ այն չքնաղ, հափշտակած հոգեվիճակը, որ կրում էի վեպի ընթերցման պահին»:

Թառել էի Արփաչայի ափին՝ ջրերի վրա օրորվող ուռենու հաստ ճյուղին և կլանում էի վեպի էջերը: Երջապատիս իրական աշխարհն այլափոխիլ էր, մի

ուրիշ երկնքի արևն էր շողում գլխիս վերև, Քառամին էր հոսում ոտներիս տակ, և Սոսի ու Վարդիթերի հետ բոնկված՝ թափառում էի Աշտարակի կախարդական այգիներում: Միքաս թրթում էր նրանց զգացումների հետ, արցունքներս թրջում էին սքանչելի վեպի էջերը՝ դժբախտ սիրահարների վշտով համակված:

Դրանից հետո կարգացի «Կովածաղիկ» վեպը նույն հափշտակությամբ: Ի՞նչ խորհրդավոր, դյութական աշխարհն էր պարզում նա իմ մանուկ մտքի տոջե»:

Տանհենդ տարեկան հասակում գյուղում Իսահակյանի ձեռքն է ընկնում և. Արովյանի «Վերք Հայաստանի»-ն, որ, ինչպես ինքն է պատմում, կարդում է «հաց ու ջուր մոռացած, հափշտակված, վերացած»:

Այդ գրքերը պատանի իսահակյանի մեջ վասում, բարբոքում են սերը զեպի հայրենիքն ու ժողովուրդը, զեպի «աշխարհի խորթ տղերքը», և զայրաւոյթ են կուտակում՝ դեպի ցարիկն ու ամեն տեսակի ճնշում, հարստահարություն:

«Եվ երեք մենք չզգացինք վերք ու ողք, մենք չտիրեցինք, մենք չընկեցինք հայկական վշտով ու վերքով, թեեւ լցուցինք վրիժառությամբ, այլ սակայն զերադանցագետ վասվիցինք հայրենասիրությամբ, արիությամբ, հերսությամբ, մենք թիավորվեցինք ապագայի շքեղ տեսիլներով»:

1892 թվին ճեմարանի վարչության գեմ ուղղված աշակերտական ըմբուռ ելույթներին մասնակցելու համար իսահակյանը վտարվում է V գասարանից:

1893 թվին ուսումը շարունակելու համար ուղեղվորվում է ելքրապա, նախ՝ վիեննա, ուր վեց տարի

մարդաբանական թանգարանում աշխատելուց հետո  
անցնում է Լայպցիգ: Այդտեղ ազատ ունինդրում է  
համալսարանի փիլիսոփայական և գրական ֆակուլ-  
տետներում, ուր ուրիշ նշանավոր գիտականների հետ  
դասախոսություններ էին կարգում Վունդաը, Կ. Բյու-  
լիսը: Լուսմ է դասախոսություններ նաև մարդաբա-  
նական և ազգագրական մասնաճյուղերում:

«Պատանի հասակիցս,—գրում է Խսահակյանը,—ինձ  
մշտապես հուզել է, մտալլկիլ է աշխարքիս մեջ զո-  
յություն ունեցող չարիքը, մարդկությունը տառա-  
պեցնող չար իրերը—աղքատություն, աղիտություն,  
բռնություն, շահագործում, ոճիբնիք: Ինձ տանջել է  
հայ աշխատավոր ժողովրդի դասն վիճակը՝ սուլթանի  
և ցարի գաֆան լուծերու տակ, և այդ չարիքները վե-  
րացնելու գործը, փրկության միջոցները»:

Նա երազել է մարդկության աղատագրումը ոռ-  
ցիալական-դասակարգային կրկնակի ձնշումներից.  
Երադել է «մի ներդաշնակ աշխարհ», ուր մարդը  
լինի ազատ, չշահագործվի իր նմանից, ապրի բախ-  
տավոր, վերանան ոճիբները, սպանությունները, պա-  
տերազմները»:

Եվ իր միտքը տանջող այդ հարցերի պատասխանը  
գտնելու համար Խսահակյանը ելքովայում կարդում  
է Շոպենի հաստերին, Նիցշեին, Հարտմանին, Հեգելին.  
ուսումնասիրում է բուզգիղմը, հուզայիղմը, պարսկա-  
կան Մազդակը, Պլատոնին, Թոմաս Մորին, մեր թոնդ-  
րակեցիներին և այլն, և այլն:

Փիլիսոփայությանը և պատմությանը զուգընթաց  
Խսահակյանը կարգում և ուսումնասիրում է գերմա-  
նական և ֆրանսական էպոսը—«Նիբելունգները» և  
«Ռուլանդը», Շեքսպիրի, Գյոթի, Հայնեի, Բայրոնի և

համաշխարհային գրականության մյուս կլասիկների  
ստեղծագործությունները:

Լուրջ ընթերցանությունն ու համալսարանական  
դասախոսություններն ավելի ու ավելի ընդլայնում  
են նրա մտահորիզոնը, թուչը հաղորդում նրա մտքին  
և երևակայությանը:

1895 թվին հանգամանքների բերումով Խսահա-  
կյանը վերադառնում է հայրենիք, սակայն այսուել  
հակացարական գործունեության համար բանտարկ-  
վում է: 1897 թվին բանտարկությունից աղատվելով  
տպագրության է հանձնում բանաստեղծությունների  
իր առաջին ժողովածուն «Երգեր ու վերքեր» խորա-  
գրով, որ լույս է տեսնում 1898 թվի սկզբներին  
Ալեքսանդրապոլում:

Ավ. Խսահակյանը բանաստեղծություններ սկսել է  
գրել շատ վաղ, 11—12 տարեկան հասակից: Տպագրած  
առաջին բանաստեղծությունը «Ծաղիկ էի նորաբող-  
րոջ...» վերնագրով լույս է տեսել «Տարագ» պատկե-  
րադարդ հանդիսում, 1892 թվին:

Եվրոպայից նա աշխատակցում էր «Մուրճ» ամ-  
սագրին իր սքանչելի ժողովրդական մոտիվներով:  
«Մայրիկիս», «Մաճկալ ևս, բեզարած ես...», «Դարձ-  
լացեք...» գեղեցիկ բանաստեղծությունները գրված են  
եվրոպայում, 1893 թվին:

Գրական ասպարեզ իջնելու օրվանից Խսահակյանը  
ձանաչվեց իրեկ բանաստեղծ և սիրվեց աշխատավո-  
րական լայն խավերի կողմից: Ժողովուրդը նրա մեջ  
տեսավ իր վշտերի ու հույզերի հարազատ երգչին, սի-  
րեց նրա բանաստեղծություններն իր ջանգյուղումների  
և հոսովելների նման:



1898 թվին Իսահակյանը Շիրվանզաղեի հետ միասնին աքսորվում է Օդեսա մինչև 1899 թ.:

1900 թվին Իսահակյանը նորից անցնում է Ելբռուպա գրականություն ուսումնասիրելու, բայց հիվանդության պատճառով ստիպված է լինում թողնել և վերադառնալ: 1903 թ. Թիֆլիսում հրատարակում է իր բանաստեղծությունների երկրորդ ժողովածուն:

Այնուհետև սկսում են թափառումների տարիները. լինում է նորից Եվրոպայում, ապա Ռուսաստանում, Թյուրքիայում, Կովկասի զանազան մասերում: Այդ թափառումների ժամանակ ուսումնասիրում է երկիրը, ժողովուրդը, նրա անտեսական, իրավական ու քաղաքական վիճակը: Եվ բանաստեղծը տեսնում է, թե ժողովուրդն ինչպես է տառապում, հեծում թե Սուլթանի, թե ցարի դաժան լծերի տակ:

Իմ մոր սուրբ խոսքը—ծաղըի նշավակ,  
Իմ հայրենիքը—սիրս ու հոգիս—  
Եվ հոշոտում են, պղծում ոտնատակ...

Բանաստեղծի այդ շրջանի երգերը համակված են հայրենիքի վշտով.

Ես՝ զավակ ճնշված ու փաքրիկ աղդի,  
Սրախ արյունով մեծ վիշտու եմ դրում.  
Վերքը՝ անդարման իմ հայրենիքի  
Դմ բյուր խոցոտված սրտումն եմ կրում:

1908 թվին լույս է տեսնում «Երգեր և Վերքեր»-ը նոր հրատարակությամբ: Նույն թվին մի շաբթ հայ գրողների և գիտնականների՝ Հովհաննեսի, Թումանյանի, Դ. Աղայանի, Ստ. Մալասոյանի և ուրիշների հետ բանասրկում էնակ Ալ. Իսահակյանը՝ մեղադրվելով հակապետական գործունեության մեջ:

1909 թվի սեպտեմբերին, բանասրկությունը նոր աղատված, Թիֆլիսից Երևան գալիս՝ գայրույթով լցված գեղի ցարական ու բուրժուական դաժան կարգերը՝ հղանում է «Արու-Լալա-Մահարի»-ն գրելու մէտքը, որ իրագործում է նույն թվի հոկտեմբերին հայրենի Դադարապատ գյուղում:

Պոեմից հատվածներ լույս են տեսնում Գ. Լելունյանի «Գեղարվեստ» հանդիպում 1910 թվին: Ցարական գրաքննությունն արգելում է ամբողջը տպագրել:

1911 թվին ցարական կառավարությունը նորից հալածանք է սկսում հայ ինտելիգենցիայի գեմ: Իսահակյանին այս անգամ հաջողվում է խուսափել ձերբակարությունից և փախչել արտասահման (Կ. Պոլիս):

1911 թվին Կ. Պոլսում լույս է տեսնում ամբողջական «Արու-Լալա-Մահարի»-ն: Այսուեղ նա աշխատակցում է արևմտահայ թիրթերին, տպագրելով բանաստեղծություններ, «Ազա Նազար», «Ոսկի քաղաք» հերքյաթները և այլն:

1912 թվին նորից անցնում է Արևմտյան Եվրոպա: Մինչև 1926 թիվը, մոտ տասնեւնինդ տարի, տարբեր ժամանակներով լինում է վեհեննա, Ցյուրիխ, Բեռն, Վենետիկ, Ժընև, Փարիզ:

Այդ ժամանակամիջոցում մի շաբթ բանաստեղծություններով, հեքիաթներով, լեզենդներով, առակներով և պատմվածքներով աշխատակցում է գաղութահայ պարբերական հրատարակություններին: Նրա այդ երկերը հետո լույս են տեսնում «Աշնան ծաղիկներ», «Հայրենի աղբյուրից», «Արձակ էջեր» հատընտիր հավաքածուներով:

1919 թվին Ժընևում Իսահակյանը դրում է իր նշանավոր «Սամմա Մհեր» վիպերգը, որ արդյունք է

Հոկտեմբերյան Սոցիալ-ստական Մեծ Հեղափոխության ազգեցության: Վաղերգը լույս է տեսնում 1922 թվին:

1926 թվին Ավ. Իսահակյանը գալիս է Սովետական Հայաստան, ուր հրճվանքով տեսնում է իր երբեմնի աղքատ, ավեր ու խավար հայրենիքը վերածնված, վերաշխնված: Սովետական Հայաստանում լույս են տեսնում նրա «Լիլիթ» արևելյան լիգենդների ժողովածուն (1927), «Համբերանիքի չիբութը» և «Ուշինարան» (1929), ինչպես նաև «Բանաստեղծություններ» ժողովածուն (1930):

1930 թվին Իսահակյանը նորից գնում է Եվրոպա իր ընտանիքը, ձեռագրերը և գրադարանը տեղափոխելու և վերջնականացնելու Սովետական Հայաստանում հաստատվելու համար:

Եվրոպայում նա հանդիս է գալիս որպես Սովետական Հայաստանի բարեկամը, որի համար հնիթարկվում է դաշնակցականների հարձակումներին:

1932 թ. տպագրում է «Նրանք դրոշակ ունին», «Կարմածատերերի մատ» պատմվածքները:

1936 թ. դեկտեմբերի սկզբներին վերադառնում է հայրենիք, դեպի իր ազգաւու ստեղծագործ ժողովուրդը՝ նրա հետ միասին մասնակից լինելու կոմունիտական հասարակարգի կառուցմանը, նրանով ներշընչվելու և նրա համար ստեղծագործելու:

Վերջին չորս-հինգ տարվա ընթացքում Իսահակյանը վերամշակեց և տպագրեց «Սասմա Մհեր» վիպերգը, դրեց մի շաբթ բանաստեղծություններ, բազմաթիվ հոդվածներ Խ. Արովյանի, Պ. Պոռշյանի, Հովհ. Թումանյանի, Տերյանի, Պուշկինի, Շեկինի, Շեկինի, Ռուսթավելու, մեր էպոսի և գրականության մասին:

1939 թ. հրատարակվեց նրա ընտիր երկերի ժողովածուն երկու հատորով, որ մինչ այժմ եղածներից ամենահարուստն է:

## II

Միջնադարի մեր աշխարհիկ բանաստեղծները երգել են առավելապես սերու վայելքը՝ երփներանգ զույներով, արևելյան կրքով ու տարփանքով:

Միըս այդ հույժ սեալիստական, աշխարհիկ երգերն, ըստ էության ուղղված էին կրոնի, և հոգեորականության դեմ, և այդ իմաստով պատմական-հասարակական կարևոր նշանակություն ունեն, բացի գրական-գեղարվեստական այն բացառիկ արժեքից, որի մասին այնպես հիացմունքով խոսել է Վ. Բրյուսովը:

Նահապետ Քուչակի, Նաղաջ Հովհաննի և ուրիշների տաղերում վայելքի երգերի կողքին հանդիպում ենք նաև սիրո վշտի տխուր նվագներին, որոնք, վերջի վերջու նոր առաջացող բուրժուական հարաբերությունների՝ գյուղական-հաճապետական կենցաղի, վարք ու բարքի վրա ունեցած քայլքայիշ ներգործության արդյունքն են: Հետաքրքրական է դիտել, որ նաև Քուչակն իր տաղերից մեկում պատմում է «Ճորով տարած, դրամով խարած» յարի մասին և ավելացնում է՝

Մերն որ գրամով մնի, զինք երեւ պիտի կրակով

Բուրժուական կարգերի վաղ շրջանը Հայաստանում սկսում է XIII—XIV դ. կ., երբ առանձնապես կիլիկիայում, ծավալվում է առևտուրն ու քաղաքների զարգացումը: Նոր կարգերն իրենց են բերում են

նոր բարքեր: «Մարդու շառը» ահռելի չափերին է հասնում, դրան ավելացրած՝ «Վաղիվան ոչ գիտեմք թե զի՞նչ ծնանի...»:

XVIII դարում, Բաղդասար Դակերի և Սայաթ-Նովայի երգերում սերո վայելքի տաղերին գերակշռում է անփոխաղարձ, դժբախտ սերո վշտի երգը: Այդ առանձնապես դիտելին է Սայաթ-Նովայի ստեղծագործություններում.

Աշխարս աշխարով կշտացավ, ես քեզնից սով, աչկի լուս...

Մեր հանճարեղ բանաստեղծ—աշուղը, «Խալի նորար» Սայաթ-Նովան, հարկավ, սոսկ «Պալում» յարի սերո վիշտը չէր երգում: Նրա խոցված սերո վշտու երգերում արտահայտությունն է գտել սոցիալական վիշտը, խալի վիշտը, որ այնպես գեղեցիկ դրսեփորվել է «Աշխարս մե փանջարա է» տաղում:

Պատկերների և գույների արևելան երփներանգությամբ, խորունկ և անմիջական, վարակիչ հուզականությամբ, ջերմությամբ և անկեղծությամբ, խորժողովրդայնությամբ Ավ. Խսահակյանի երգերը համանալուն են նահապետ Քուչակի և Սայաթ-Նովայի տաղերին:

Հովհ. Թումանյանի խոսքը Սայաթ-Նովայի մասին միանգամայն համապատասխանում է նաև Ավ. Խսահակյանին:

«Մի հոյակապ սերահար է, բոնըված ու բոընկած սերո հրդեհով, նրա լուսի տակ էլ նկատում է աշխարին ու իրերը, զգում է, որ երգում, վերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու ան-

... ել ոչ մի սեր ճար չի անի իմ դարդին.

Եվ կամ

Դու քո ճամբան գնա, քուսիկ,

Եվ թող լինի նա պայծառ,

Ինձ մի գթա, ինձ մի սիրի,

Ես ընկեր չեմ քեզ համար:

Անձնական երջանկությունը չէ՛ր խսհակյանի ուրոնածը, այլ ներդաշնակ հասարակարգն ու ընդհանուրի բարորությունը, որով պայմանավորված է անհատի երջանկությունը: Նյութական բարորությունը, սերո վայելքն ու փաղաքշանքները չէին կարող բավարարել բանաստեղծին և հաղեցնել աղատության, լավագույն կյանքը ու կարգի նրա տենչանքը: Եթե նրան տային էլ Սրաղի ափին երաղած բոստանը, քողաճին ու Շուշիկը,—նա իրեն երջանիկ համարել չէր կարող: Նորից գժգուն ու խոռվ, Մհերի նման, պիտի թափառեր՝ ճշմարտությունը որոնելու, և դարձյալ հանգիստ չպիտի գտներ՝ ինչքան թափառեր: Արաղի ափի քողաճիկում էլ Շուշիկի կողքին, աշխարհի բոլոր ծայրերից նրան պիտի հանճելին կյանքի խորթաղերքի լացն ու հեկեկանքը, և թշվառների արցունքները կաթել ու կաթել հավաքելով՝ պիտի թունավորեին սերո վայելքի նրա սակավ վայրկյանները...

Այստեղից՝ միանգամայն անհիմն է քննադատներից ոմանց կարծիքը, թե Խոահակյանի իդեալը Արագի ափի բոստանն է: Արագի ափի իդիլիան Ավ. Խսահակյանի սոցիալական օպոզիցիայի սոսկ մի արտահայտությունն է՝ հակագրված բուրժուական ատելի կարգերին և երականությանը:

Ուշագրավ է, որ Շեշինկոն էլ երաղել է Դնեպրի ափին բարդիների հովանու տակ մի խրճիթ և խրճիթի մեջ՝ իր գեղեցիկ Օկոանոչլային: Ինչ խոռը,

միամտություն կլիներ կարծել, թե Ուկրաինայի Պրումիթեռությունը բղեալը սահմանափակվում էր, ուրեմն, այդպիսի մի եսական ու շատ նեղիկ «գրախառվ»։ Մի այլ բանաստեղծության մեջ, հնաբավոր թյուրիմացությունները կանխիլու համար, Շեվչենկոն զրում է, (բերում ենք մի հատված ազատ թարգմանությամբ)։

«Զգիտեմ ինչո՞ւ՝ գեղջուկի խրճիթը խաղաղ զրախտ են կոչում. այդտեղ, այդ խրճիթում, տառապել եմ և ես, այդտեղ մի ժամանակ թափվել են իմ առաջին արցունքները։ Զգիտեմ՝ աստծու մոտ կգանվի՞ այնպիսի չարեք, որ այդ խրճիթում չլինի... Սակայն՝ խրճիթը «գրախտ» են անվանում։ Այդ խրճիթում ես ոչ թե դրախտ ու բախտ, այլ դժոխք տեսա... Այդտեղ հոգսը, կարիքը, անսպատությունն ու աշխատանքը աղոթելու էլ չեն թողնում»։

\*  
\*\*

Կլասիկ գրականության մեջ մենք չգիտենք մինչեւ վերջ երջանիկ սիրո օրինակ, որովհետև դասակարգավին հասարակությունը մարզուն լիակատար երջանիկ դարձնելու անընդունակ է։

Սերն, ամենից առաջ՝ դասակարգային դաժան կարգերի զոհն է։ Իսահակյանն իր հերոսի՝ Օհան ամու բերանով առում է։ «Ամեն, ամեն գեշ բաների պատճառը իմ ու քուն է։ Գեղ ու քաղաք իրար գոռում են փողի, հարստության համար, ուրիշի աշխատանքը տանելու համար։ Ու քանի որ փող կա՝ մարդ չկա, քանի որ իմ ու քու կա՝ սեր ու խիզճ չկա։ Եղտեղից էլ հարուստ ու աղքատ, զրկող ու զրկվող, բանա, արյունհեղություն։ («Համբերանքի չիրուխը»)։

Բուրժուական – դասակարգային հարաբերություններն են բաժանում սիրող զույգերին, և՝ իսահակյանի «Սիրեցի՝ յարս տարան...» բանաստեղծության մեջ այդ վիշտն է արտահայտված։

Վ. Տերյանը, որ Իսահակյանին հարազատ ու ներդաշնակ այնքան նվազներ ունի, նույնպես որոշակի բացահայտել է սիրո վիշտ սոցիալական արմատը.

Ա՛ս, սակայ են զնում քեզ,  
Անձնա ցնորք իմ հողու...

Կապիտալիստական հասարակագուն է, որ ստրկացրել է կնոջը, ենթարկել նրան իր շուկայական օրենքներին։ Եթե կինը «խորամանկ», խարող՝ է, եթե նա «ծախվում է», ապա այդ ոչ թե բղխում է կնոջ «առեղվածային» էությունից, այլ պայմանավորված է հասարակության դասակարգային բնույթով։ Դասակարգային հասարակության ոչնչացումը կազմադրի և կնոջը, կփշի նրա ստրուկության շղթաները։ Հետեւպես, սիրո վիշտի և ողբերգության արմատը գտնվում է կապիտալիստի մեջ։

Ավ. Իսահակյանը պատահեկական շրջանի իր, թեհանարվեստ, բայց խորապես հուզական և սրտաբուխ բանաստեղծություններից մեկում ասում է։

Այս աշխարհը սառն է, սառույց,  
Զաւրկ եմ սիրո արեից...»

Սիրո նույն վիշտն է լալիս Հովհ. Թումանյանի գեղեցիկ լեգենդի հերոսուհին։

Հայրիկ, հայրիկ, միթե չեկա  
ես աշխարջում անշեշ հուր,  
Թառամում է սիրտըս ահա,  
Պաղ է այս կյանքն ու տըխուր...

\*\*

Արդ, ինչ կոնկրետ բովանդակություն ուներ իսաւակյանի սիրո իդեալը: Նա ինչպես էր ըմբռնում սերը, որ չը գտնում, և ապա մեր բանաստեղծի սիրո իդեալն ինչ չափով է բացահայտում նրա սոցիալական իդեալի բնույթը:

Լիլթը իսահակյանի իդեալը չէ:

Զնայած լեգենդար, բիբլիական բնույթին, լիլթը սեալ կին է, տիպական ներկայացուցիչն այն կանանց, որոնց երեմն սիրել սակայն, որոնցից հաճախ խարշվել ու խոցվել է բանաստեղծը:

Իսահակյանի երազած «Հավերժական կինը» ավելի մոտ է Գյոթեի «Das Ewig—Weibliche»-ին, որ, ըստ Լունաչարսկու, գերմանացի մեծագույն պոետի «Լրքով սիրած իդեալն է, յուրաքանչյուր մեծ նպատակի ընդհանրացումն առնասարակալ...» («Դօկտօր Փայստ»):

Իր երգեր-վերքերում Ավ. իսահակյանն ավելի որոշ է արտահայտել միրո իր իդեալը. նախ և առաջ դա անձնուրաց, անձնազոհ սերն է. սերն անձնազոհություն է.

Ի՞նչ կա երկրում և՛ սրբազն, և՛ անզին,  
Քան թե զոնզեն, քան թե լինել անձնվեր

Առաջադիր խնդիրը լուսաբանելու տեսակետից շատ հետաքրքրական է «Անտուն գիշերներ» բանաստեղծության սկզբանական վարիանտը, որ բերում էնք ամբողջապես.

Անտուն գիշերներ,  
Անքուն գիշերներ,

Քույրիկ, քեզ համար, քո սիրով այրված  
ես շատ անցրի, ես շատ տանջվեցի...

Բայց անդին քույրիկ, կյանքը հաճույք չէ,  
Եղ այսուհետեւ այդպես սիրելու

Սիրտս սեր չունի,  
Հոգիս երգ չունի:

Ո՞չ, հավատա ինձ, այս սեր չէ երբեք,  
Վերջ տուր ցնորդին, նայիր քո շուրջը—

Այստեղ ձգտում կա,  
Կոիվ ու քրտինք:

Սէր տուր ընկերիդ, որ ձգտեմ, կովեմ,  
Սէր տուր եղբորդ, որ թափեմ քրտինք:  
Չէ որ, քնույրիկ իմ, այդպիսի սիրով  
Ապրում է երկնաք, սիրում է երկնաք,  
Ինձ սիրիք այդպիս—երկնային սիրով—

Թող ձգտեմ, կովեմ  
Թող թափեմ քրտինք\*):

Հստ այգմ՝ իսահակյանը կնոջ սերը (անձնականը) ոչ թե հակազրում է, այլ համազրում դեպի մարդիկ ունեցած սիրուն, որովհետև, կրկնում էնք, անհատի երջանկությունն անհրաժեշտաբար պայմանավորված է կուկտիվի երջանկությամբ: Կնոջ սերը պիտի լինի հասարակօգուտ գործունեության համար ներշընչման աղբյուր («սեր տուր ընկերիդ, որ ձգտեմ, կովեմ, սեր տուր ընկերիդ, որ թափեմ քրտինք...»):

Այդպիս էր ըմբռնում սերը նաև XVIII դարի ֆրանսական լուսավորիչ Հելմեցիուրը: Նա իր «Երջանկություն» փիլիտիվայական պոեմի վերջում հանգում է այն եղբակացության, թե անհատի շահերի ճիշտ համազրումը հասարակականի հետ՝ սոցիալական կարգերի վերակառուցման միջոցով՝ ապահովում է անհատի երջանկությունը: Սիրո հարցն էլ նա լուծում է ելնելով այս ըմբռնումից: Սիրով աղջիկը՝

) \*) «Տարազ», 1893, № 32, էջ 536:

Նետղանիքն իր սիրալ բաց է անում հումանիզմի հաշմար և սիրած տղայից՝ ելեղորից պահանջում է չարի աստծու։ Արիմանի ձեռից (—սոցիալական-քաղաքական ճնշումից) ազատել մարդկանց\*):

Հետաքրքրական է զիտել, որ «Ֆարհատ և Շիրին» աղքարիջանական-ռուպերեկական լիենդում անձնական սերն ու երջանկությունը կապակցվում է հասարակական բարորության հետ։ Գեղեցկունի Շիրինն իր սիրան ու սերը խոստանում է նրան, ով ջրով կկենդանացնի կարծր անապատը, կվերացնի սովը՝ մարդկային թշվառության և ոճիրների ակունքը։

Իր «Իգիթ Սարդար» պուեմում (1894) Ալ. Իսահակյանի հերոսուհին՝ Սանամը, սիրած տղային՝ Սարդարին դեպի մարտ է ճանապարհում՝ վաթանը պաշտպանելու, և հաղթական վերադարձից հետո է խոստանում իր սերը, որովհետեւ երջանիկ սերը ազատ հայրենիքումն է հնարավոր։

Ելքան բարով, ազիզ յար ջան,  
Անձարին չարա եղնիս,  
Սուրբ յոթնանուն քեզ թուր ու թե,  
Հետ դասնաս, մուրազդ առնես\*\*)

Այսպիսով, իսահակյանի ստեղծագործության մեջ կնոջ սերն ու անձնական երջանիկությունն ստորագամված է հայրենիքի և ժողովրդի սիրուն, իսկ վերշնոս էլ առընթեր է ազատության գաղափարին («Կյանքից թանգ բանը», «Հեյ ջան, հայրենիք...», «Ա՛ս, երնեկ թե...», «Աղատության Ջանդ», «Դու չես հանկանաш...»):

\*) Գելվեցիй—«Счастье», песнь IV.

\*\*) «Արքու», 1894 դիրք, Ա., էջ 115—116:

Հայրենիքի և ժողովրդի սերը գերակշռում է որպիսիական սիրուն։ Գուսլար Մերկոն իր չորս սրբիներին զոհաբերում է՝ բայց հրաժարվում է փառարանել իր հայրենիքի ու ժողովրդի դահձին («Ժողովրդի քնարը»):

Տարագիր բանաստեղծը սիրած կնոջ զըկումն էլ հայրենիքն է երազել։

Գրկեր ինձ մեղմիկ,—  
Քո կախարդ զըկում  
Ես զգում եմ ինձ  
Իմ հայրենիքում։

Եվ կամ՞ զարիք յարին ապշելը կանչում է հայրենիքի կարոտով ու հրապույրով՝

Դարձի վաթան, հողն անուշ է,  
Հողն անուշ է, ջուրն անուշ է...

Եվ եթե իսահակյանը երբեմն խոսքեր է նետել հայրենիքին, ապա դա բուրժուազիայի հայրենիքին է վերաբերում, «որի հողն արնոտ՝ անդուզ հերկողը չոր քար է կրծում իր հացի կողքին»։ Հայնեի ջուրհակներն էլ եռակի անհճք էին հյուսում թաղավորի և հարուստների հայրենիքին։

\* \*

Կարեկցությունը Ալ. Իսահակյանի երգած հիմնական հույզերից մեկն է, և դա շատ բնորոշ է սիրո երգչի համար, որովհետեւ «կարեկցությունը սիրո աղբյուրն է» («Բուրդան — թոչուն»)։ Դեպի թշվառ պարփան տածած կարեկցությունից ծնվում է սերը, իսկ վերջինո մղում է դեպի անձնապնդություն։

Եվ բնորոշ է, որ իսահակյանի երգերում հաճախ սիրո և կարեկցության նվազները միանում են մի

Ներդաշնակության մեջ, և դժվարանում հս որոշել  
սիր թե կարեկցություն է արտահայտվածը, թե և  
մեկը, և' մյուսը միաժամանակ,

Միշտ զգում եմ ես, որ մի ճեռագոր,  
Օտար աշխարհում ինձ պես վշտահար  
Մի սիրտ է այրվում՝ անհայտ, մենավոր  
Եվ երազում է, թափում ինձ համար:

Ել թվում է ինձ, որ սուբք համբույրով  
Ես փայփայում եմ ձեռները նրա.  
Եվ գուրգուրում եմ, զգում կարողով՝  
Քննքուշ զըստիք իմ կրծքի վրա...

Բնորոշ է նաև, որ Խոահակյանն էր մի շարք եր-  
գերում սիրած աղջկանը «Խաղելի քույր», «Խաղելի  
ընկեր» է անվանում, ինչպես Սայաթ-Նովան «ախ-  
պեր» (հմմ. «Խոսկիրըդ մալում իմ արի...» տաղը):

Հետաքրքրական է դիտելը, որ ժողովուրդը յար-ը  
գործածում է և՛ ընկերոջ, և՛ սիրածի առումով:

Հովհ. Թումանյանը Սայաթ-Նովայի մասին գրած իր  
նշանավոր հոդվածներից մեկում («Սայաթ-Նովայի  
երգերի բնավորությունը») այդ առթիվ նկատում է.

«... Եվ էդ զգացմունքները նրա երգերում մեծ մա-  
սամբ արտահայտում են էնքան մեղմ ու անվրդով  
խաղաղություն, որ նրա սերը նման է ընկերության,  
ընկերությունը՝ սիրու: Որ հայերենի քերականության  
մեջ էլ արականի ու իգականի տարբերությունը  
չկա, — Սայաթ-Նովայի մի քանի երգերում դժվար է  
հասկանալ՝ իր ողևորված խոսքով մւմ է դիմում նա, —  
քննքուշ սիրով սիրած ընկերին, թե տարփալի սիրով  
սիրած կնոջը»:

Այդ հանդամանքը թե Սայաթ-Նովայի տաղերում,  
թե Ավ. Խոահակյանի երգերում բարձրացնում է կնոջ

մարդկային արժանապատվությունը: Դրանով բահան-  
տեղծը կնոջ մեջ գնահատում է ոչ միայն կնոջականը,  
այլև մարդկայինը, սիրո զգացմունքն ազատելով այն  
տարփալի, պացչոտ, զուտ սեռական ըմբռնումնեց,  
որ հիվանդագին չափերի էր համառւմ դեկադանուի  
գրականության ներկայացուցիչների մոտ:

\* \* \*

Ավ. Խոահակյանի սիրո իդեալին—անձնաղոհ, կա-  
րեկից, հումանիստական սիրուն իրական կյանքում  
համապատասխանում էր միայն մայրական սերը, որ  
բանաստեղծի ստեղծագործության մեջ եղել է իդեա-  
կան և գեղարվեստական ներշնչումների հավերժանոս  
աղյուր:

Մայրն անձնաղոհ՝ սիրո, կարեկցության, հումա-  
նիզմի կրողն է, սիրմալը այն հումանիզմի, որ ըն-  
դունակ է Մաքսիմ Գորկու գեղեցիկ հերոսի՝ Դանկո-  
յի նման պատուի սեփական կուրծքը, դուրս կորպել  
սիրաը և այն ջահ ու դրոշ դարձած՝ լուսավորել ձա-  
հիճներում և խավարում տառապող մարդկանց փրկու-  
թյան ուղին...

Մայրն է հումանիզմի սերմերը ցանել բանաս-  
տեղծի մեջ—կարեկցության, աղնվության, անձնա-  
զոհության, ժողովրդասիրության վահմ գաղափար-  
ների սերմերը.

Զե՞ որ դու զբիր իմ մեջ քո հոգին  
Եվ բարեն սիրել ու աղնիվ լինել.  
Դու վասիր իմ մեջ հորը երկնային—  
Դեղեցկի ծարավ, անհունի ծըգտում,  
Կըրիվ չարի գեմ ու ընդգեմ սըտին,  
Ապրիլ ու տանջմիկ ուրիշ սիրուն,  
Դու լցրիր իմ մեջ ծովի չափ մեծ սեր—  
Այրվեն որ լույս տալ ամբոխի համար,

Ավ. Խոահակյան—2

Բնկնիլ փսթորկի, հըսաբուղիսի մեջ  
Աժբոխի համար, աշխարհի համար...

Եվ կամ՝

«Ամենն առաջ թող ինքը հասնի  
Ամեն հիվանդի, հեռու ճամբարդի,  
Ամենն հետ թող ինքը հասնի  
Քեզ, իմ խեղճ որդի, իմ պահպուխտ որդի»:

Այս տողերը լավագույն ապացույցն են այն բանի  
որ իսահակյանի երգած մայրական սերն ունի շատ  
կոնկրետ բովանդակություն։ Դա ընդհանրապես մայր-  
ական սերը չէ, —որովհետև բուրժուական-դասակար-  
գային հասարակարգում այդ սրբազն զգացմունքն էլ  
ենթարկվում է կապիտալիզմի շուկայի ապականիչ  
ազգեցությանը, —դա աշխատավորունու, գեղջուկունու  
մայրական անապակ հույզն է։

Եվ, իսահակյանի սիրո բնույթն ըմբռնելու տեսա-  
կետից կարենը է նշել, որ նա իր սիրատենչ և սիրա-  
տանչ սերը համեմատում է մորը կորցրած մանկան  
կարոտի ու վշտի հետ։

... իմ խեղճ, իմ որք սիրտ, ինչքան մորմոքես,  
Ե՛ւ քեզ գուրգուրող ու քեզ գուրգուրող  
Աղիկ մեր չըկա,  
Ու նանիկ ասող, որ անոնց քնիս...

Կամ թե՝ սիրազուրկ սիրտը նմանեցնում է հի-  
վանդ մանկան, որ կարոտ է փայփայանքի ու գուր-  
գուրանքի («Իմ սրտին», «Տարադ» 1901, № 29):

Իսահակյանի սիրո երգերի շարքում պետք է հի-  
շատակել ընկերական սիրուն նվիրված երգերը՝ զըր-  
գած մեծ մասամբ ստեղծագործության առաջին շրջա-  
նում, որոնցից մի քանիսը հետադայում չի մտցրել  
իր ժողովածուներում, ըստ երկույթին համարելով  
գեղարվեստական տեսակետից թույլ դորձեր։ Սակայն,

34

թե անարվեստ, բայց անկեղծ, հուզիչ ու անմիջու-  
կան այլ երգերը ներդաշնակ են հնչում բանասեկեղ-  
ծի սիրո երգերի սիմֆոնիայում։

Այս ամպերին ամպ մ' էլ հասավ,  
Ուսիները լուս կուլան.  
Ա՛խ, դարդերիս դարդ մ' էլ հասավ,—  
Ո՞ւր ես, ազիզ ընկեր ջան։

Բանաստեղծի համար ընկերական սերն էլ, ինչ-  
պես և սիրո բոլոր մյուս տեսակները արժեքավոր է  
նրանով, որ իր մեջ կըսում է սերը դեպի մարդիկ, դե-  
պի «աշխարհի խորթ տղերքը», «խեղճերը».

Էնոր դարդը, ախ, մեր դարդն էր,—  
Վախ, մեր սրտից էն գնաց,  
Էնոր դարդը խեղճի դարդն էր,—  
Խեղճի սրտից էն գնաց,

Ժխտելով բուրժուական աշխարհը, որ ամեն ինչի  
հետ սերն էլ առ ու ծախի առարկա էր, իսահակյանը  
հանգիստ ու ապաստան էր որոնում հովվական կյան-  
քում («Ալագյաղի մանիներ»)։ Հովվական պարզ կյանքն  
ու անապակ սիրո իդիլիան բանաստեղծը հակադրում  
էր բուրժուական աշխարհին, քաղքենիական կեղծ բար-  
քերին և ծախսող սիրուն։ Նույն գիծը տեսնում ենք  
նաև Վ. Տերյանի ստեղծագործության մեջ։

Լինեի չոբան սարերում հեռու,  
Գայիր, անցնեիր վրանիս մոտով...

Հովվիներն ազատ հեռու սարերում...

Իսահակյանի, ինչպես և Տերյանի տեսչացած հովվ-  
ական սերը քաղքենու հիվանդու, պակշտ սերը,  
սեռային մոլոցքը չէ, այլ առողջ և միանգամայն

35

Դորմակ սերը, որի մեջ աշխատանքի մոմենտն ու  
ռաջնակարգ տեղն է գրավում.

Մաճկալ ես, բեզարած ես,  
Առը շուր տուր, տուն արի,  
Ծովի պես քրտնած ես,  
Եղներն արձկի, տուն արի:

... Դադրած, բեղարած յար ջան,  
Ամպերն ելան, դեն արի.  
Բեզարած ջանիդ զուրբան,  
Ծըտից թե առ, թեզ արի...

Արագի ավին տենչացած բոստանում բանաստեղծը  
երազում է «ծով քրտինք» թափել Շուշանի (սիրած  
աղջկա) համար:

Եվ հովվական սիրո վայելքն էլ սիմվոլիզմի եր-  
դած «շրթունքներն արյունոտող» համբույրների սե-  
րը չէ.

... Ու համբուրեց ինձ մեղմով,  
Աշնազն մեղմով, սիրով լի,  
Ասես, գեմքիս վրայով  
Սահեց թել բլբութ...

Սակայն, իսահակյանի երգած հովվական սերը  
նրա սիրո իդեալին է պատկանում, նրա ցնորքին,  
որովհետև այն՝ իրականում գոյություն չուներ:

Եւրը հովվական վրանի տակ, կամ Արագի քողախ-  
կում էլ թունավորվում էր կապիտալիզմի ապակա-  
նիչ շնչից և սոցիալական չարիքը բանաստեղծի իդիւ-  
լան էլ վերածում էր դժոխքի:

Եվ իսահակյանը, խովված կյանքի փոթորիկնե-  
րից, թողնելով Շուշիկի քողատիկն ու օջախը՝ դեպի բնու-  
թյան փոթորիկն էր ձգտում, նրա որոտների մեջ խլաց-

նելու սոցիալական վոլորկի ձայները («Զան, վո-  
լորանքն է իմ ազիլ հարսը...»).

... А он, мятежный, просит бури,  
Как будто в бурях есть покой!  
(Лермонтов)

### III

Կալածականի, անկայուն թափառականի անհան-  
գիստ հոգեվիճակը իսահակյանի նախասորհրդային  
շրջանի ստեղծագործության հիմնական տրամադրու-  
թյուններից մեկն է, որ պայմանավորված էր նրա  
հասարակական իդեալի և բուրժուական իրականու-  
թյան բաղկացմով: Բանաստեղծը հասարակական հար-  
մանիայի էր ձգտում, բայց ամենուրեք հանդիպում  
եր աններդաշնակության, սոցիալական սոսկալի կոնտ-  
րաստների:

Իսահակյանի այդ հոգեվիճակը նրա պոեզիայի մեջ  
արտահայտված է քարավանի պատկերով.

... Դողանջն է միայն ձիգ քարավանի  
Հետավոր, անհայտ հանապարհների  
Հրապույրներով դյութում իմ հոգին  
Թափառումների տենչով անմեկն...

Լերմոնտովը, —որին հարազատ ու հոգեկից է իսա-  
հակյանն իր սահմանավործության որոշ զերով, —այդ

Նույն հոգեվիճակն արտահայտել է, ինչպես հայտնի է, հալածական ամպերի պատկերով: Նա իրեն համարում էր «թշնամական ուժից հալածված», իսկ այդ «թշնամական ուժը» նիկոլայան մտրակի և բոռնցքի կարգերն էին, որ պատկերավոր ու հակիրձ Գեղցենը բնութագրել է այսպես: «Խավարի և կամայականության, մունջ մահացման, անհետ կորստի, թաշկինակը բերանը խցած, տառապանքների թագավորություն»:

Իսահակյանին հալածով նույն այդ ցարական կարգերն էին, ավելացրած նաև սուլթանական արյունունու հաթաղանի ուեժիմը:

Ստեղծագործ անհատի և հասարակության բազմությունը, որ արդյունք էր դասակարգային պայքարի, ամելի ցայտուն գծերով հանդես է եկել Մ. Գորկու մեջ՝ նրա կյանքի և ստեղծագործության մինչ հեղափոխական շրջանում: «Հենց որ ինձ մարդուն պատշաճ կերպարանք է արվել, ես ճշացել եմ... դա ատելության և բողոքի ճիշն էր», — գրում է Գորկին:

Թեև ոչ գորկիական թափով և հեղափոխական հետեղականությամբ, այնուամենայնիվ Իսահակյանի ստեղծագործությունն իր հասարակական տենդենցիան վորոշ չափով ուղղված էր բուրժուական հասարակարգի և նրա քաղաքական հենարան ու գորավիդ՝ ցարիզմի դեմ:

Կապիտալիստական աշխարհի քողազերծումն ու ժխտումն Իսահակյանը ուժեղ պափսով տվել է իր նշանավոր «Արու-Լալա-Մահարի» պոեմում: Բանատեղծը քողազերծ է անում բուրժուական հանրակարգի բոլոր ատրիբուտները—ընտանիք, սեփականություն, պետություն, կենցաղ, կրոն, հոգեբանություն—կա-

պիտալիովմի անտեսական և իրավա-քաղաքական հարաբերությունները—բաղիսն ու վերնաշենքը:

Ի՞նչ է պատիվը, հարգանքը մարդկանց,—սոսկ սոկուց, վախից  
հարդ են մատուցում...

Եվ ինչ է գանձը, որով հիմարը տիրում է մարդկանց, և հանճար  
և սեր,—

Բյուրավորների քամլած արյունը, մեռենարի միս, որի  
արցոնքների

...Ապիրատ աշխարհ, որ հզոր սովին գարձնում է գողին՝ աղնիվ,  
բարեհույս,

Ապուշին՝ հանճար, վախկոտին՝ կտրիճ, տղեղին՝ չքնաղ և  
պոսնիկին՝ կույս:

Կապիտալիստական աշխարհի այս ձաղկումն ու  
ժխտումը Իսահակյանի պոեմում անհատական «բուն-  
դի» կերպարանքով է արտահայտված:

«Անծայր աշխարհի բոլոր ծայրերից, բոլոր խոր-  
շերից» բանաստեղծի զգայուն սրառմ կուտակված  
արցոնքները փոխարկվելով ցաման ու բողոք՝ այդ  
պոհմում զուրս են ժայթքել՝ հրաբխային ուժգու-  
թյամբ...

Ժխտելով կապիտալիստական աշխարհը, ճիշտ է,  
Իսահակյանը նրան չհակազրեց մի կոնկրետ հանրա-  
կարդ, բայց նրա ժխտումն անհեռանկար չէր, այլ իր  
մեջ կրում էր լավագույն ապագայի, թեև անորոշ և  
մշուշային, ակնկալումը՝ արտահայտված արևի սիմ-  
վոլիկ պատկերով:

Անհատի և հասարակության հականությունը բուր-  
ժուական հանրակարգում, աշխատանքի և կապիտալի  
հականությունների ընդհանուր ցլթայի մի օդակն է:

«Մարդն ապատ է ծնվում, բայց ամենուրեք շղթաւների մեջ է»,—զրում էր դեռևս ժ. ժ. Ռուսասոն:

Անհատի ձերբազատության պահանջը, որ այնպես ուժգին բարձրացնում էր հսահակյանը, ուղղված էր նույնպես կապիտալիզմի դեմ, որ կաշկանդում, շղթայում էր մարդու աղատությունը, փշում ստեղծագործողի թև ու թոխը: Կապիտալիստական աշխարհը հսահակյանի համար «անդուռ ու անել վաճդակ» էր, «քարե զնդան», «ահավոր ջենենմ»:

Իսահակյանն իր խոսքի կրակն ուղղել էր «գիշակեր բուրժուագիայի, անգրագետ ինտելիգենցիայի և այլասեաված ուսանողության» դեմ, նաև մանր-բուրժուական, քաղքենիական այն ճղճիմ ճահճի, հոգեկան այն նեխվածության և թշվառության դեմ, որ շրջապատում էր նրան:

Մեր բանաստեղծի «անհատական բունդը» ոչ մի առնչություն չունի XIX դարեվերջի դեկադենտական ինդիվիդուալիզմի հետ, որ սադիստական վայրագ հաճույքներ էր որոնում և հասարակական ակտիվությունն սպանող ապատիա:

Իսահակյանի արհամարհական վերաբերմունքը պաշտոնական հասարակությանն է ուղղված եղել—ինչպես Պուշկինի և Լեբմոնտովի մոտ,—և ոչ ժողովրդի, որին սիրում էր նա և որի հարազատ զավակն է ինքը՝ որպես մարդ և որպես ստեղծագործող:

Անապատ անհատի, կեղեքվող դասակարգերի, ճնշված ու հալածված ժողովրդի վիշտն է միշտ խոսվել հսահակյանի միտքը, հուղել նրա սիրտը և զայրույթի շանթեր արձակել նրա զրչից:

\* \* \*

Սակայն, հսահակյանը դերծ չէր հակասություններից: Նրա մեջ առկա էր ֆառաւափի երկվությունը—մի կողմից կյանքի և երջանկության անհագուրդ ծարավն ու տեսնչը և ձգտումը կեցության նոր, լավագույն ձևերի, մյուս կողմից՝ հասարակական իդեալի որոնումներից հուսահատ՝ կյանքի ժխտումը, մոայլ նիշիլիզմը, մոռանալու և «վայելքի վայրկյանը բըռանելու» Մեֆիստոֆելյան հրապարակուր... Սակայն, նրա մեջ շնորհուել էր հասարակական վիշտը, որ կարողանար այն խեղդել գիտու և կնոջական թովշանքի մեջ:

Ազ. Իսահակյանի հոռեանությունն ընդհանուր, վերացական բնույթ չէր կրում, այլ ուներ շատ կոնկրետ բովանդակություն: Նրա պեսսիմիզմի ակունքները գտնվում էին սոցիալական անտազոնիստական կարգերում, որոնց մեջ նա գոն ու երջանիկ լինել չէր կարող: Նա գիտեր կյանքի հմայքն ու հրապարակը, բայց տեսնում էր, որ հասարակական հոսի կարգերը դարձնում են այն «ահավոր ջենենմ» (զժոխ):

Մ. Գորկին կերմոնատովի հոռեանությունը համարում էր շատ իրական զգացմունք. «Այդ հոռեանության մեջ պարզ հնչում է ատելություն ժամանակակից հասարակության նկատմամբ, նրա (այդ հասարակության—Ա. Ի.) ժխտումը, պայքարի ծարավ ու վիշտ, և հուսահատություն՝ միայնության, անզորության զիտակցումից: Նրա հոռեանությունն ամբողջապես ուղղված է աշխարհիկ հասարակության դեմ»)\*:

\*) «Временник Пушкинской комиссии». 1937, № 3, стр. 278.

Իսահակյանի հասարակական վշտի մոռայլ ստվերը ընկնում էր նաև բնության վրա: Եթե Գյոթեն բնությունը համարում էր ներդաշն ու միասնական մի ամբողջություն, և հասարակական կյանքում ներդաշնակություն չգտնելով, մահը համարում էր այն ճանապարհը, որ նրան պիտի միացներ բնությունն ու հավերժությունը, ապա իսահակյանը բնության մեջ հանգիստ ու հարմոնիա չէր տեսնում և մխտում էր մահը, համարելով այն մեծագույն չարիք, չարիքի անսպաս աղբյուր, թշնամական, գեմոնական մի ուժ, որ ոչնչացման է հանգեցնում ամեն գոյություն: Բնությունը նա տեսնում էր լցված կյանքի ու մահի դաժան պայքարով, ուր ամեն գոյակ ինչպես և մարդը թվարտում է տառապանքի և մահվան ճանակերում:

Կրկնում ենք, իսահակյանի անբավականությունն ու հոգեկան անձուկը արդյունք չէր անձնական ձախորդության (անհաջող սեր): Նրան խեղելու չափ ծանր էր շնչելը բուրժուական վայրագ կարգերի ու բարքերի կապարյա մթնոլորտում: Նրան ճնշում էին սոցիալական-քաղաքական դաժան կարգերը, այլապես ներդաշնակ աշխարհում, նա կարող էր,—ինչպես Համլետն է ասում, —«ընկույզի կեղեի մեջ էլ իրեն լավ զգալ»:

Իսահակյանը շատ խորն էր զգում սոցիալական կյանքի ահավոր հակասությունները, բուրժուական-ցարական վայրենի իրականությունը, որ այնպես ուժգին բազմվում էր նրա հասարակական իդեալին՝ երջանկության, սիրո ու ներդաշնակության անհագուրդ տեհնչանքին:

Նա լավ էր ըմբռնում, որ դասակարգային հասարակության մեջ՝

Սուրբ կամ զնդան պիտի լինիս, ծշմարտություն չկա ուրիշ...

Սակայն, սոցիալական հակասությունները նա այն ժամանակ չէր զիտում հեղափոխական պրոլետարիատի տեսանկյունից:

Ընկ. Դիմիտրովը ուշխտագի հրկիզման գործի դատավարության ժամանակ արտասանած իր համարձակ ճառում մեջ բերելով Գյոթեյի «Խշիր կամ հնաղանդիք»... բանաստեղծության տողերն, ասաց. «Այն, ով չի ուզում զնդան լինել, նա պետք է մռերձ լինի»:

Իսահակյանը ձգտում էր ձերբազատվել բուրժուական հասարակության կապանքներից, արյունախում ցարիզմից, նա երազում էր նոր, լավագույն հասարակական կարգեր: Բայց ի՞նչպես կործանել հին աշխարհը և կառուցել նորը—այս էր խնդիրը:

Աբու-Լալա-Մահարինի թռիչքը դեպի «աղատության թագավորությունը» (նրա սիմվոլի համաձայն՝ գեպի արել), կաշկանդված էր նույն այդ կապիտալիզմի—«անհամարժեշտության թագավորության», —շղթաներով, և կապված չլինելով միակ հետևողական հեղափոխական դասակարգի՝ պրոլետարիատի բախտին ու պայքարին՝ դատապարտված էր անհաջողության:

Ղեկավարվելով մեր հանձարեղ ուսուցչի Վ. Ի. Լենինի մեթոդով, որով նա արժեքավորում է Լ. Ն. Տոլստոյի ստեղծագործությունը, կարելի է ասել, որ իսահակյանի հակասությունները նրա անձնական հակասությունները չեն, այլ արտահայտությունն այն ծայրահեղորեն բարդ, հակասական արագլցիաների,

որոնք բնորոշում էին նրան շրջապատող հասարակության զանազան դասակարգերի և զանազան խավերի, և առաջին հերթին մինչեղափոխական Հայաստանի ազգաբնակության հիմնական գանգվածը կազմող գյուղացիության աշխարհայացքն ու հոգեբանությունը:

Ավ. Իսահակյանն իր ստեղծագործության և աշխարհայացքի խոր արմատներով՝ կապված լինելով ժողովրդի հետ, «բյուր-բյուր ճամբեքով» ճշմարտությունը որոնելուց հետո հանգեց սոցիալիստական հեղափոխության և սոցիալիզմի հանաչմանը:

Նրա քաղաքական և ստեղծագործական գարգացման այդ ճանապարհն ըմբռնելու տեսակետից շատ բնորոշ են «Ազատության Զանգ» և «Անհուն վրեժի և ատելության...» բանաստեղծությունները: Առաջինը գրված է 1903 թ. հայկական դպրոցները փակելու և եկեղեցական կալվածները գրավելու առթիվ տեղի ունեցած ցույցերի և հակացարական տրամադրությունների ժամանակ, իսկ երկրորդը 1905 թ. հեղափոխության շրջանում:

Բանաստեղծը կովկասի ժողովուրդներին միացման և ապստամբության կոչ էր անում «ընդդեմ բռնության, ամբարիշտ Զարի» (=Յարի):

Ազատության Զանգ, դու վեն զողանջն  
Կովկասյան վսեմ, վես բարձունքներից,  
Ինչպես մըրըիլ, շաչե, շառաչե,  
Մինչև սիրապանձ աղատն Մասիս

Եվ բավական է՝ անարգ լծի տակ  
Մենք ստրուկ մանաք՝ ձեռներս շրդիա.  
Կապանք փշըեւս մեղ թնայն ու կըրակ,  
Մեղ ուժ և կորակ, վըրէժ որոտաւ.

...եվ աղատության նորոգ արեի  
Ոսկի ներբողդ, Զանգ, զըկարթ հւնչեն,  
Բյուր զաղաթներից աղատ Կովկասի  
Սուրբ եղայլության տոնին մեղ կանչեն,

Այս բանաստեղծությունները, — սրոնց մեջ արտահայտված է աղացին և սոցիալական-դասակարգային ձնշումներից աղատագրվելու և ապստամբության կոչ, ինչպես նաև ժողովուրդների եղբայրության գաղափարը, — նշանակալից տեղ ունեն ոչ միայն իսահակյանի ստեղծագործության, այլև մեր ամբողջ գրականության մեջ:

Հատկանշական է, որ սուսական առաջին հեղափոխության շրջանում իր բանաստեղծական պատկերացումների մեջ իսահակյանն իրեն համարում էր քաղաքական պայքարի զոհ («Լեռների լանջում...», «Հոգիս մոռայլ էր...»): Այս կողմով ևս իսահակյանը հարազատ է լերմոնտովին, որ նույնպես իրեն պատկերացնում էր իրեւ զոհ ընկած հանուն հայրենիքի և աղատության<sup>\*)</sup>:

Վերևում ասացինք, թե իսահակյանի համար կնոջ սերը ստորագաս է հայրենիքի և ժողովրդի սիրուն: Այդ տեսակետից շատ բնորոշ է «Լեռների լանջում...» բանաստեղծությունը՝ գրված 1906 թ., հեղափոխության շրջանում:

Եթե Շուշան յարի սերն անկարող է լինում բարձրացնել «վերեկմանի մութ խորքում» քնած բանաստեղծին (ան «Ժեռ, սև քարը սրտիս վրա...» բա-

<sup>\*)</sup> Кирпотин, — „Политические мотивы в творчестве Лермонтова“, 1940, стр. 72—73.

նաստեղծությունը), ապա «մարտահրավերը մեծ ազատության» կենդանացնում է «մեռած, մոռացված» պոետին («Լեռների լանջում...»):

Իսահակյանի ստեղծագործության համար շատ բնորոշ այս բանաստեղծությունը բերում ենք ամբողջովին:

Լեռների լանջում, ծանրը հողի տակ  
ես թաղված էի՝ մեռած, մոռացված.  
Ու վաղուց, վաղուց, անհայտ, լուս, մեռնակ  
ես նընջում էի հոգում մեջ սուզված:  
եվ հանկարծ մի օր լսեցի հեռվից  
Մարտահրավերը զե՞ն ազատության,  
Հմբուտ ամբոխի ձայնը մրրկալից,  
Երգեց մարտական, շեփո՞ր ռազմական  
Վառ գրոշակի լրոխտ ծածանում,  
Զենքի շառաչյուն, ձիերի դոփյուն,  
Քայլեց առնական  
Հողիս մոտեցան,  
Եվ դողաց ահա,  
Եվ թեթևացավ  
Հողը իմ վըրա.  
Եվ սիրու լցվեց այրվող աըյունով,  
Ուզեցի ելնել նժույգն ամենի  
Խթանել թըռնել շառաչել զենքով.  
Կըսվել ու մեռնել դաշտերում ռազմի...

Նման տրամադրություն արտահայտված է նաև «Մույլ ամպերից, հըզոր կայծակով...» բանաստեղծության մեջ՝ գրված 1904 թվին:

Ավ. Իսահակյանի այդ բանաստեղծությունների քաղաքական ազատաբաղ ու մարտակոչ տրամադրությունները գալիս, հանգում են «Սասմա Մհեր»-ին,

որ դառնել է մեր բանաստեղծի իդեալան հանգուցակետը:

Մեր ժողովրդական էպոսի այդ իմաստուն և ըմբռուստ դյուցագունն Ավ, Իսահակյանին հետաքրքրել է վաղուց (1902 թվից սկսած) և երկար տարիներ ստեղծագործական մտորումների նյութ է եղել, բայց գեղարվեստական ձև ու մարմին է ստացել Հոկտեմբերյան Հեղափոխության ազգեցության տակ:

Ենթակա ժողովրդական էպոսի վարիանտներից, Ավ. Իսահակյանը, մեծ ստեղծագործողի վարպետությամբ, իր վիպերգում կերտել-պատկերել է հայ ժողովրդի պայքարն իրեն ճնշողների դեմ, և գեղարվեստորեն բայցահայտել է միջնադարի հայ աշխատավոր մասսաների լավագույն գաղափարները և տեհաչերը:

Սոցիալական անարդարության, չարիքի դեմ ընդվզող, որոնող ու թափառական Մհերն իր «բնութք»-ով հարազատ է նրա ստեղծագործողին:

Մանկուց որբ, «զուրկ ու մերկ, ծարավ, անոթի ու վարանդի» Մհերն իր թափառումների ժամանակականական է լինում ճնշումներին ու շահագործմանը: Նրա հոգում ամեն անգամ կուտակվում է «կրակ ու բոց» և նա խոր զայրույթով է լցվում դեպի տիրողները, ճնշողներն ու հարստահարողները: Հմբուտանում է նա դաժան կարգերի ու տիրողների դեմ և բոլոր ուամիկներին պայքարի է կոչում:

Ենենք գուպար  
Աշխարքի դեմ զրկող ու չար.  
Ողջ ավերենք  
Ու սամկություն բերենք աշխարհ,  
Ռամկի օրենք ու իրավունք,  
Որ տէր զառնա ուամիկն իրեն  
Սուրբ վաստակին, արդար հացին:

Իսահակյանի Մհերը մի կուռ ու տմբողջական  
կերպար է՝ քանդակված «կայծակ քարով ու որձ-  
քարով», ինչպես «Մհերի թեհ»-ը:

Ժողովրդական վարիանտների համեմատությամբ  
Իսահակյանը մի հիմնական հավելում է կատարել՝  
բովանդակության խմաստով (վերջերգ): Ժողովրդա-  
կան վարիանտների համաձայն Մհերը քարանձավից  
դուրս չի գալիս. նա դուրս է գալու այն ժամանակ,  
երբ ցորենի հատիկը մասուրի մեծության լինի, կտմ՝  
երբ «ուամկություն» լինի աշխարհում:

Իսահակյանը Մհերին դուրս է բերում քարանձա-  
վից, դրանով նա շեղվում է էպոսից, բայց հավատա-  
րիմ է մնում պատմությանը:

Հայ ժողովուրդը, Հոկտեմբերյան Սոցիալստական  
Մեծ Հեղափոխության շնորհիվ դուրս ելով ցարիզմի  
ու կապիտալիզմի խավար բանտից:

Մհերը, որ հայ ժողովրդի սիմվոլն է, չեր կարող  
մնալ քարանձավում:

Եվ ժողովրդական բանաստեղծը Մհերին դուրս  
բերելով իր գարսավոր զնդանից, միացնում է ազա-  
տության, «ուամկի օրենք ու իրավունքի» համար  
պայքարով միլիոնների մեծ բանակին:

Մհերը հաղթում է՝ միացած մասսաների երթին  
ու պայքարին:

Այդպես է Իսահակյանն ավարտում իր վիպերգը:  
Եվ դա՝ հայ ժողովրդի ազատագրության պատ-  
մական փաստի գեղարվեստական մեծարվեստ ընդ-  
հանրացումն է մեր գրականության մեջ:

#### IV

Ավ. Իսահակյանի արվեստը ժողովրդային է իր  
ոգով ու ոճով, իր ձևով ու բովանդակությամբ: Մհեծ  
բանաստեղծն իր երգերում դրել է ժողովրդի սիրով  
բարախուն իր սիրաբը: Նա երգում է այնպես, ինչ-  
պես բանաստեղծ ժողովուրդը կերպեր՝ անձնավորված  
մի անհատի մեջ: Եվ միանդամայն հասկանալի է,  
երբ ժողովուրդը բանաստեղծի երգերից շատերը հա-  
մարում է իր սեփական ստեղծագործությունները:

Պարզությունը, անմիջականությունը, հուզակա-  
նությունը, երաժշտականությունը կազմում են Իսա-  
հակյանի երգերի արժանիքները: Գրակայնությունը  
չի մատնում, զգալ չի տալիս իրեն: Իսահակյանի,  
ինչպես և Հովհաննեսի մեջ լինեն գրված—չնչում են բնու-  
թյան թարմությամբ և ազատությամբ:

Իսահակյանի ստեղծագործության մեջ մենք տես-  
նում ենք հայ ժողովրդական երգի բոլոր առանձնա-  
հատկությունները:

Այդ առանձնահատկություններից մեկը բանաս-  
տեղծական զուգագրությունն է (պարավելիզմ) և հա-  
կադրությունը:

Մի գեպքում բանաստեղծն իր հոգեվիճակի միջով  
է զիտում բնությունը՝ նրան հազորդելով իր սեփա-  
կան տրամադրությունը.

նախիլ-կաթիլ տմովն է ցողում  
Մեռ ու պղտոր երկնքեն.  
Մաղիկ-մաղիկ վերքս է ծորում  
Իմ անգյուման, սե՛ որտե՞ն:

Երկրորդ գեղքում պայծառ պեյզաժի փոնի վրա  
բանաստեղծը բաց է անում իր ներաշխարհը, իր  
մոայլ հոգեվիճակը հակագրելով բնության պայծա-  
ռությանը, վայելքին ու հավերժությանը.

Առավոտուն ծով ճաճանչում  
Արտուռն ուրախ ճախրում է վեր.  
Ցավ ու խաղաք չի ճանաչում՝  
Երգում է լույս, երգում է սեր,  
Խոկ իմ սիրտը տխուք ու սե՛  
Շուրջը՝ ավեր ու ցավեր.  
Եվ իմ վշտոս գլխի վերն  
Արտուռն ուրախ երգում է սեր...

Իսահակյանի լիրիկայի երկրորդ առանձնահատ-  
կությունը, որով նա նույնպես հարազատ է ժողովուրդ-  
ստեղծագործողին, բնության շնչավորումն է: Ժողո-  
վուրդն իր հույզերը, և առանձնապես վիշտն ու ցավը  
արտահայտելիս գիմում է բնությանը, խոսում նրա  
հետ, նրան ընկերակից, իր վշտին բաժանորդ դարձ-  
նում, որովհետև մենակ ծանր է վիշտ կրելը: Այդ գի-  
տելի է ոչ միայն ժողովրդական երգերում, այլ և  
նրանցից զրականությանն անցած լինելով, մեր գրող-  
ների մոտ, օրինակ՝ Թափփու «Զայն տուր, ով ծո-  
վակ...» և Ռ. Պատկանյանի «Արաքսի արտասուբք»,  
Պ. Չուրյանի «Լճակը», Հովհ. Թումանյանի «Անուշ»-ից  
Սարոյի երգը՝ «Բարձր սարեր...», «Հառաշանք»-ի  
նախերգանքը («Լեռներ, ներշնչված դար-

ձյալ ձեզանով...») և այլն: Օրինակները բազմաթիվ  
են, ջայուռն նմուշներ ունի նաև Ավ: Իսահակյանը՝  
«Դարդու լացեր, սարի սմբուլ...», «Սկամութ ամպեր  
ճակտիդ դիվվան...», «Հոգնած եմ, անտառ...» և այլն:

Բնության շնչավորումն Ավ: Իսահակյանի ստեղ-  
ծագործության մեջ արտահայտվում է նաև այն դեպ-  
րում, երբ նա խոհ ու հույզ է վերագրում նրան:

Ամեն գիշեր իմ պարտիզում  
Լալկան ուռին, հեղ ուռին,  
Վշտառչոր լաց է լինում,  
Լաց է լինում իմ ուռին:  
  
Եվ սրբում է առավոտու  
Կույս արել նազելի  
Հուր ծամերով հեղ ուռենու  
Արցունքները բյուրեղի...

Իսահակյանի երգերը ժողովրդականին մոտեցնող  
մի երրորդ առանձնահատկությունն էլ դիալոգն է:  
Հարբանը, բազմաթիվ ժողովրդական երգեր և ջան-  
գուրումներ կառուցված են դիմալոգի վրա: Իսահա-  
կյանից հիշատակենք նշանավոր «Սիրուն աղջիկ, եր-  
կինք լինեմ...», «Եղ ի՞նչ կրակ կանես, մերիկ...»,  
«Մայրիկ, նայիր, արեն ի՞նչպես...» բանաստեղծու-  
թյունները:

Չորրորդ առանձնահատկությունը, որ իսահակյանի  
լիրիկան հարազատ է դարձնում ժողովրդական երգին,  
հակիրճությունն է:

Մ. Գորկին իր հիշողությունների մեջ պատմում  
է, թե Լ. Ն. Տոլստոյը ոռւս ժողովրդական երգերի  
մասին խոսելիս ընդգծում էր նրանց պարզությունը,  
հակիրճությունն իրեն առավելություն: — «Всё просто,

слов мало, а чувства много. Настоящая мудрость  
немногословна...»<sup>\*)</sup>:

Իսկ Շեքսպիրն ասում է՝ «Համառոտությունը  
հանձարի ոգին է»:

Իսահակյանի ստեղծագործության մեջ հանձարեղ  
հակիրճության բարձրարվեստ նմուշներ են «Ռավենա-  
նայում» («Արարատի ծեր կատարին...»), «Մահը»,  
«Ազրյուրի մեջ մի մարալ...», «Երկու մանուկ՝ տղա-  
պղիկ...», «Լորիների տակ» բանաստեղծությունները  
և այլն:

Իսահակյանը մշակում, վերամշակում է երկը ի  
հաշիվ նրա ծավալի, տարածության։ Նա սեղմում,  
խտացնում է, և դրանով ոչ միայն չի թուլանում  
երկը, այլ ընդհականակը, ուժեղանում է նման զըս-  
պանակի, երբ սեղմելով ավելացնում ես նրա լարվա-  
ծությունը, նրա ուժը։ Այսպես՝ «Մահը» բանաստեղ-  
ծության առաջն վարիանտի չորս տողը, ուր նկա-  
րագրվում է քարվանների զողանջելով անցնելը՝ կըր-  
ճատել է, որովհետև բանաստեղծության երկրորդ,  
հիմնական մասում աշխարհը տրորող «անտես, անձայն»  
քարվանի (=մահի) պատկերն արդեն արված է մի-  
անգամայն ամբողջական։

«Անտես զիշերներ» բանաստեղծության սկզբնա-  
կան վարիանտի 19 տողը վերամշակելուց հետո մնա-  
ցել է այն 9 տողը, որ ծանոթ է ամենքին։ «Գերեզ-  
մանս անհայտ լինի...» բանաստեղծության 16 տողից  
կրճատել է ուղիղ կեսը, թողնելով այն ութ տողը, որ  
մեղ հայտնի է։ «Ես որ մեռնիմ ու իմ վերքից...» և  
«Ես որ մեռնիմ, ինձ կթաղեք...» տարբեր բանաս-  
տեղծությունները ծագել են մի բանաստեղծությու-

նից <sup>\*)</sup>): Ընդ որում, երկրորդ բանաստեղծության հին-  
գերորդ և վեցերորդ տողերը՝

Գերեզմանիս չորս գին փովին  
Վայրի դաշտեր ծփծփան...

վերամշակելիս դարձել է՝

Գերեզմանիս չորս գին փովին  
Ցորեն արտերն ու ցոլան..

Եվ այդ շատ բնորոշ է ժողորդական բանաստեղծի  
համար, որ սերն էլ, մահն էլ պատկերացնում է աշ-  
խատանքային միջավայրում։

Նման օրինակների թիվը կարելի է բազմա-  
պատկել։

Հայնեի ֆրանսացի հետազոտողներից մեկը գեր-  
մանացի մեծագույն լիրիկի գլուխավոր և ամենանշա-  
նակալից առանձնահատկություններն է համարում  
պարզությունը, ժողովրդական եղանակը և ուելիզմը։  
«Ոօրյա կյանքից վերցրած այդ բառերը և դարձ-  
վածքները մեղ զարմացնում են, — զրում է նա։ Մեզ  
թվում է, թե լուս ենք երեկով մեր սեփական խո-  
սակցությունները կամ սիրահարների գործածած ամե-  
նասովորական արտահայտությունները» <sup>\*\*)</sup>։

Այդ նույնը կարելի է ասել և իսահակյանի մասին։

Երա սկզբնական շրջանի բանաստեղծությունների  
լեզվի մեջ իշխող էր բարբառը։ Կոմպոզիցիայի տեսա-  
կետից երբեմն անարվեստ ու պրիմիտիվ լինելով,  
իսահակյանի նույնիսկ պատանեկական փորձերն էլ  
համակում են խոր հույզով, ջերմությամբ, անկեղծ են,  
անմիջական և ճշգրտացի։ Եվ դրա մեջն է նրանց

<sup>\*)</sup>Տես «Մուրճ», 1902, № 7, էջ 144.

<sup>\*\*) A. Лежнев, „Два поэта“ (Тютчев и Гейне), стр. 130.</sup>

հրապարայը, դրա համար են նրանք, ինչպես և ձշմարիտ արվեստի յուրաքանչյուր գործ՝ վարակիչ, վերջինը լ. ն. Տուրտոյը համարում էր գեղարվեստական երկի գլխավոր պայմանը:

Դիտելի է, որ Իսահակյանն իր երգերը վերահրատարակելիս հետզիեսե նրանց վոել է բարբառայնությունից, էանովրափիզմից, սակայն պահել է կոլորիտը — ժողովրդական լեզվի բույրը, համն ու հոտը, պատկերավորությունը, տիպականությունը, դիպուկությունը:

Իսահակյանի երգերի ժողովրդայնությունն այնքան օրգանական է, որ դժվար է որոշել՝ որտեղ է Իսահակյանն ոգտագործել ժողովրդական երգը, և որտեղ՝ հնարել ստեղծել իր սիփականը՝ ժողովրդականի ողով ու ոճով:

Նա իր ստեղծագործությունների մեջ, օգտագործում է ոչ միայն ժողովրդական բառեր ու բառաձեերեկինակներ (բյուր-բյուր, ծուփ-ծուփ, անուշ-անուշ, մուշ-մուշ), զույգ բառեր (ծով-ծարավ, ծափ ու ծիծաղ, ալ ու ալլան), հոմանիշ-հոմանիշ բառեր (ժեռ-լեռ, հով-զով, օրոր-շորոր), ձայնաբիություններ, այլ և առաջնորդվում է ժողովրդական լեզվի քերականությամբ՝ խարսխություն չդնելով արեմայան և արելյան բարբառների միջև (կը և ում ճյուղեր): Նրա լեզուն սնունդ է առնում և՛ բարբառներից, և՛ զրաբարից ու միջին հայերենից: Իսահակյանի լեզուն մեր պոեզիայի մեջ ամենահարուստ լեզուն է:

Նրա լեզվի ուսումնասիրության ուղղությամբ արդեն արգում են առաջին քայլերը \*):

\*) Խ. Կանայան—«Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների լեզուն» գրքույկը՝ Արմֆանի հրատարակությամբ:

\*  
\*\*

Ավ. Իսահակյանի ստեղծագործական երևակայությունը շատ հարուստ է և գերազանցապես տեսողական: Նրա մեջ ներդաշն միացած են բանաստեղծն ու նկարիչը: Ծնորհիվ նկարչական այդ ձիրքի, Իսահակյանը միշտ կու տողով արտահայտում է ոչ միայն խոր, վարակիչ, անմիջական հույզ, այլ և տալիս է գունեղ, կենդանի պատկերներ, վառվուն պեղպաժներ: Նրա ամենափոքրիկ լիրիկական բանաստեղծություններն իսկ կարելի է նկարագրել՝ այնքան դրեղ է նրա խոսքի նկարչական ուժը:

Այստեղ ևս Իսահակյանը հարազատ է իր մեծ ուսուցչին—ժողովրդին:

Նա զույների մեծ վարպետ է, որոնց խիստ կոնտրաստով կամ նուրբ համագրությամբ տալիս է և՛ պատկեր, և՛ տրամադրություն ու հոգեվիճակ:

Ժամերգ հյուսել  
Կանգնել ես կալը,  
Օրըս ու արել՝  
Կապել ես ալը:

Բանաստեղծն իր անսեր յարի ունքերը նմանեցնում է դահճի կեռ թրին, նրա կարմիր զգեստը՝ դահճի զգեստի:

Զեր տան տուած՝ ձյուն ու գիշեր,  
Ա՛խ, ես կանգնել կը զողամ,  
Դու դահճի պես ալ ես հազեր—  
Ալդ շովեն է իմ արյան...

Եվ այդ դահճային կարմրությունը բանաստեղծն ավելի որոշ ընդգծում է ձյան սպիտակության և գիշերվա սկսության կոնտրաստով: Սև թանձրացումով

Իսահակյանը տալիս է մերժված սիրո վիշտն ու ողբերգությունը.

Թանց սարյակի թեր սե,  
իմ աչքերը շատ են սե.  
Աչքն էլ սրտի հայելին է,  
զի՞ որ սիրտս շատ է սե:

Սակայն, եթե մերժված սիրո վիշտն ու ողբերգությունն իսահակյանն արտահայտում է սեի ու կարմըրի թանձրացումներով ու կոնտրաստով, ապա հովվերգական սերը, սիրո վայելքը նա տալիս է Սարյանական արևաշող և արեարույր գույներով։ «Ալագյազի մանիներ»-ում՝ իսահակյանի գույները պայծառանում են, արևային լույս ու ջերմություն ստանում։

Այստեղ Սարյանական պայծառ գույների ծիծաղող խայտաբղետությունն ու խաղը աշխուժություն և դինամիկա են հաղորդում պեյզաժին։

Դու, Արագած, ալմաստ վահան  
Կայծակեղեն թրերի,  
Գաղաթներդ՝ բյուրեղ վրան  
Թափառական ամպերի  
Թիթեռներդ՝ հուր-հրեղեն  
Թռչող-ճախբող ծաղիկներ,  
Զառ ու զարմանք երազներեն  
Պոկված ծվեն-ծվիկներ:

Կամ՝

Է՛յ, Մանթաշի երազ-հովիտ,  
Դուն, զմբուխտ օրորնց...  
... Հուր-հափերդ՝ թերեն արծաթ,  
Հտուցներդ՝ լալ-մարջան...  
... Փետուրները պայծառ ոսկով...

Մանկության նվիրած երդերում ել իսահակյանի

գույները պայծառ են, արևով ողողված, ունեն թարմություն, հմայք ու ջերմություն։

Հուրհըռում եր արեն ուրախ,  
Գետն եր գնում քաղցրակարկաչ  
Զորս դիս գարնան կարմիր ծիծաղ,  
Վարդեր կարմիր, կարմիր կակաչ  
... Զորս դիս գարնան կանանչ թերեր,  
Կանաչ հովեր, ծովեր կանանչ...  
... Խայտում էլինք զմբուխտ գետում  
Եղ զնդում եր արեն ուրախ...

Իսահակյանի նկարչական խոշոր ձիրքը հանդեռ է գալիս նաև «Աբու-Լալա-Մահարի» պոեմում։

Գույների թանձրացումն ու պայծառացումն այս-  
տեղ և տալիս է համապատասխան եֆեկտ։  
Հրաշալի է գիշերվա պատկերը.

Գիշերն ահարկու՝ և սև և հսկա մի շղիկի պես թերելը փոեց,  
Անձիր թերել իջան, ծածկեցին քարավանն, ուղին և դաշտերն  
անափ։  
... Զէին շողշողում լուսինն ու աստղեր. խավարն՝ ասես թե՝  
պատած խավարով։

Խավարի այդ թանձրացումը տեղի է տալիս, երբ  
«շքեղ, լուսավառ» բարձրանում է արելը, և անապատը  
լցվում է, ողողվում լույսի հեղեղով։

... Եղ վեհ արեի ջահերի ներքո փուլեց, ծավալվեց ծիրն  
անապատի,  
Վառ-վառ հուրհըաց, ինչպես տիտանյան հսկա առյուծի  
ոսկեփառ մորթի

Ավ. Իսահակյանն իր բանաստեղծություններին  
երաժշտականություն է հաղորդում գերազանցապես  
ալիսերացիաների միջոցով։ Բերենք մի-երկու օրինակ՝

Շըշուկ ընկալ ահա վարդի, ծաղկանց մեջ  
Մըֆծացին շուրջս մետաքս զառ փեշեր,  
Իմ նազելուս շունչը քնքուշ ինձ շոյեց...

կամ՝

Առավոտուն ծով ճաճանչում  
Աբուտան ուրախ ճախրում է վլր,  
Ցալ ու խավար չի ճանաչում...

Եղ կամ՝

Քնքուշ լուսնի շուշան փոշին...

Իր հոգեվիճակը, իր սուբեկտիվ ապրումները երաշ-  
ղի միջոցով արտահայտելը, որ նույնական հատուկ է  
ժողովրդական ստեղծագործությանը, իսահակյանն  
օգտագործում է («Երազ տեսա, ձեր տան առաջ...»,  
«Երազիս տեսա՝ օրոր ու շորոր...», «Երազիս մեջ լիճը  
տեսա...», «Երազիս տեսա, որ մայրու թշվառ...» և  
այլն):

Իսահակյանի մոտ երազը լոկ պատկերավորման և  
արտահայտողական միջոց է: Նրա այդ երազներն ու-  
նեն միանգամայն ուեալ բովանդակություն և զերծ են  
կրոնականությունից և միստիցիզմից:

Այստեղից արդեն ինքնին բլինում է իսահակյանի  
գրական ուղղության հարցը:

Իսահակյանը գերազանցապես ուեալիսա է: Թո-  
մանտափմը նրա ստեղծագործության մեջ հանդիս է  
եկել ավելի որպես ձև ու ոճ, քան բովանդակություն  
և աշխարհայցք: Նա սիրո նկատմամբ ունի միան-  
գամայն ուեալ մոտեցում: Զարոն, Շուշիկը, «Մաճկալ  
և, բեղարած ևս...» բանաստեղծության գեղջկունին,  
նույնին բիթիւական լիլիթը ուեալ կանայք են: Ել  
դրանց մեջ, սեալիստական անգերազանց ուժով զըծ-  
ված է իսահակյանի գլուխ-գործոցը—Մայրը.

Մի տեղ նա մանկանն է դուրսկուրում.

Յորեկ եղավ, ոչխարն եկալ,  
Ազիդ բալես քընած մընաց.  
Վեր եր, բալա, անսւշ ճըզա,  
Տիտիկ արա, ծիծիկ մամա,  
Չիծիկ-միծիկ տոտիկ արա.

Հնապալա, բալիկ քունդ անուշ  
Շաքար ու նուշ թուշդ անուշ:

Մի այլ տեղ մայրն աղոթում է «ամեն հիվանդի,  
հեռու ճամբորդի», և ամենից հետո միայն՝ իր պահ-  
ուխտ որդու համար: Կամ՝ որդուն բանտն են զրեւ  
մի ամբողջ տարի է լուր չունի և կունկներին է դի-  
մում:

— «Ձմն, չմն, մեռնիմ ձեր ձենիկին,  
Այ կառնկներ, նըշտուններ,  
եարաբ տեսաբ իմ բալիկին,  
եարաբ խաբար չեք բերեր:

Ինչպիսի սեալիզմով, պարզությամբ և միաժա-  
նակ ինչ ջերմությամբ և հուզականությամբ է իսա-  
հակյանը ավել գեղջկունու սերը, սիրո կարութ դեպի  
իր «դադրած, բեղարած» և «ծովի պես քրտնած յարը»  
('Մաճկալ ևս, բեղարած ևս...»):

Ժողովրդական հույզի և հոգերանության խոր ի-  
մացություն է հանդիս բերել մեծ վարպետն իր այդ  
կարգի բազմաթիվ բանաստեղծություններում («Բա-  
րով քեղի, ազիդ յար...», «Ոխտը տարով հեռու քեզ-  
նեն...», «Փեռ, սե քարը սրախ վրա...», «Զմեռն ան-  
ցավ, եկավ գարուն...» և այլն):

Միայն ճշմարիտ մեծ արվեստագետին է հատուկ  
այդպես իր եսը ծուշել ժողովրդի եսին և այդքան  
հարազատությամբ ու հավասար ուժով տալ և՛ զեղջ-

կունու ու գեղջուկի սիրո վիշտն ու կարոտը, և' մոր  
նվիրական հույզերը:

Սիրո երգերում իսահակյանի գույներն այնքան  
ուեալ են, որ սիրերգական մի ամբողջ վեպ կարելի է  
հյուսել: Նասիրել է ու սիրվել, հեռացել է ու մոռաց-  
վել («Այցի եմ դալիս քեզ մոտ ես համախ...»), «Ա-  
սում են, թե՛ դու այնպես...»). Նամակագրություն է  
ունեցել, որ աղջիկը ետ է պահանջում («Ինչու, ինչու  
հմտա այսպես...»), նկարագրվում է վայրը, ուր սիրո  
հավատարմության ուխտ են կատել սիրահարները  
(«Այս ուռու տակ մենք երգեցինք...»). Նկարագրվում  
է և աղջկա պատաքինը, որի համաձայն նկարիչը կա-  
րող է գծել նրա նկարը.

Մի մըայոն աղջիկ տեսա  
Ռիալտոյի կամուրջն,  
Հորդ մաղերը—գետ գիշերվա,  
Եվ հակինթներ՝ ականջին  
  
Աչքերը՝ սե—արեներ սե  
Արեների ոլես անշեջ,  
Գալարում էր մեջքը թեթև  
Մաղկանկար շալի մեջ:

Իսահակյանի ոեալիդմն ավելի ցայտուն հանդես  
է եկել նրա եղիկական ժանրի գործերում (գեղար-  
վեստական արձակ, լեզնոդ, հերիաթ, վիպերգ, առակ):

Իր «Սասմա Մհեր» վիպերգում հատկապես ոեա-  
լիստական մեծ ուժով տրված է Ոստանա քաղաքի  
փոնապանին վերաբերող մասը, ինչպես նաև հարկա-  
հավաքի տեսարանը և աթարա հողում («Եկավ իշխանն  
էն արտատեր, կիսեց տարավ ցորենի շեղ...»), ծեր  
գուսանի հացի գովքը, պղնձի քաղաքին և որմնա-  
դիրներին վերաբերող հատվածը, և այլն:

Վիպերգի ամբողջ կոմպոզիցիան, լեզուն, բառաձևերն  
ու տմբերը, հիպերբոլիկ պատկերները ստեղծում են  
ժամանակի պատրանքը—ընթերցողին փոխադրում են  
Մհերի ժամանակները:

Իսահակյանի պատմվածքներում («Համբերանքի  
չիրուխը», «Հին գյուղը», «Դյումը եցի կապիտան Ղա-  
ղարը») հանդես է բերված ժողովրդի կյանքի և կեն-  
ցաղի զարմանալի իմացություն: Հերոսը (Օհան ա-  
մին) առածներով, ասացվածքներով ու առակներով  
տալիս է կենսափորձից հանած իր փիլիսոփայությու-  
նը; Իր այդ զրույցով, իր աֆորիզմներով Օհան ամին  
ուեալ կենդանի, գունեղ խարակեր է, գծված մեծ  
վարպետի վրձինով. «Խմ հացս իմ քըտնիքովս պիտի  
ուտեմ», «Աշխարհքից բան տանող չի եղել», «Չեռքս՝  
բան, ոտքս՝ գերեզման»: Կամ՝ «Մարդը գնացական  
է, նրա լավ գործը՝ մնացական, ըսել է՝ ինքն է մնա-  
ցական: Ա՛յ, խոսքի օրինակ, էս շաքարը քցեցիր չա-  
յի մեջ՝ հալավ, կորավ, չկա, բայց չայն անուշցավ:  
Ենպես ել լավ մարդը, կմեռնի, բայց նրա լավ գոր-  
ծը աշխարքը կանուցնե: Թե չե առանց լավ մար-  
դու աշխարքը շատ գառն է՝ օձի լեղի...»:

Ավ. Իսահակյանը մեր բազմաժանր հեղինակներից  
է: Իր հարուստ հույզերն ու խոհերը նա մարմնավո-  
րել է գրական տարբեր տեսակների մեջ—լիրիկական  
բանաստեղծություն, պոեմ, լեզնոդ, առակ, պատմը-  
վածք, արձակ բանաստեղծություն, հերիաթ, վեպ):

Հարկավ, Իսահակյանի ժանրային տարերքը լի-  
րիկան է, բայց նա մեծ վարպետություն է հանդես  
բերել նաև մյուս ժանրերում: Գրականագիտության  
մեջ ցույց է տրված, որ մաքուր ժանրեր գոյու-  
թյուն չունեն, և ժանրերի փոխադրաներթափանցման

փաստերը բարմաթիւլ են: Զհեռանալու համար մեր նյութից, օրինակներ բերենք հենց Իսահակյանից: Մի շաբաթ լիբիկական բանաստեղծությունների մեջ նա հանդես է բերել պատմողական և նկարչական փայլուն տաղանդ: որ էպիկական տարերք է և գալիս է ժողովրդական ստեղծագործությունից: Նկատենք, որ ժողովրդական անսունիների, հայրենների և մեր միջնադարյան տաղերգունների երգերի մեջ շատերը փոքրիկ չափածո նովելներ ու պոեմներ են:

Ավ. Իսահակյանի «Մաճկալ ես, բեղարած ես...» նույրը լիբիկական բանաստեղծությունն ունի նուն էպիկական տարրեր.

Կաթի ոելը քաշել եմ,  
Դրել եմ հովին ասոի,  
Աւ գողնոցը փուել եմ...

«Դարդը՝ սրտիս, աղքատ ու խեղձ...» բանաստեղծությունը, որ նույնպես մեծ հուղականությամբ ու լիբիզմով է շնչում, մի փոքրիկ ու գողտըիկ պոեմ է: Եվ բնորոշ է, որ հեղինակը իր վերջին ժողովածվում (1939 թ. հարաբարակություն) այն զրել է լեզենդների և պոեմների բաժնում՝ «Պանդուխտ որդին» վերնագրով:

Սովորաբար ասվում է, թե Իսահակյանը լիրիկ է նաև իր էպիկական գործերում: Այս կարծիքը կարոտ է վերաբայման: Լիրիկական տարրեր կան նաև այնպիսի հոյակապ էպիկական ստեղծագործության մեջ, ինչպիսին մեր «Սասունցի Դավիթն» է: Լիրիկական տարրերն առկա են նույնպես Իսահակյանի «Սասմա Մհեր» վիպերգում, բայց նա իր ամբողջությամբ մի եպիկական գլուխ—գործոց է, մի խոշոր ու ինքնատիպ ստեղծագործություն:

«Մանկությունը», «Արող վեպը», «Հեքիաթը», «Եղանակը» արձակ բանաստեղծություններ են՝ լիրիկական մեծ շնչով զրված, բայց «Համբերանքի չիբուխը», «Հին գյուղը», «Գյումրեցի կապիտան Ղաղարը» («Ռւստա Կարո» վեպից) գեղարվեստական արձակի գլուխգործոցներ են, ուր արտահայտված է էպիկական հանգստություն, կապատմողական հմայք, տրված է խարական ու հոգեբանություն — Ռւստա Կարոյի, կապիտան Ղաղարի, Օհան ամու, Ալի Բայրամի նման սեալ, վիպական ամբողջական կերպարներ՝ տիպիկ հանգստանքներում:

Իր գործադրած բոլոր ժանրերում Իսահակյանը մեծ և ինքնատիպ արվեստագետ ե: Յուրաքանչյուր ժանրում հնա իր ստեղծագործական շաղախին տալիս է ավյալ ժանրի բնույթին համապատասխան ձև ու կերպարանք, լեզու և ոճ, և դա այնպիսի վարպետությամբ ու հմտությամբ, յուրաքանչյուր ժանրի մեջ տարրեր ու առանձին, այդ ժանրին ու նյութին հարազատ ոճով ու ոգով, որ առես զրանք տարրեր հեղինակների՝ գործեր լինեն՝ ստեղծված հավասար վիրառողությամբ: «Արու-Լալա-Մահարի» լիրիկական փիլիսոփայական պոեմը միանգամայն տարրեր է «Սամմա Մհեր» վիպերգից. «Մանկություն» արձակ բանաստեղծությունը բոլորովին տարրեր «Գյումրեցի կապիտան Ղաղար»-ից, «Լիլիթ»-ը հիմնովին տարրեր «Համբերանքի չիբուխից», «Մոր սիրող» լեզենդը տարրեր «Մեր նախահայրերից»:

Տարրեր ու առանձին լինելով իրենց ստեղծագործական մեթոդներով, իրենց նյութից և ժանրային առանձնահատկություններից բլիսող ոճով, զրանք կապված են իրար էպիկա, ոգով ու իդեոլոգի-

այով, և միմյանց հարազատ էն՝ որպես միւնույն մոր  
զավակներ:

\* \* \*

Ավ. Իսահակյանի անունը սերտորեն կապված է  
մեր գրականության զարգացման վերջին հիսնամյակի  
հետ:

Հովհ. Հովհաննիքյանի և Հովհ. Թումանյանի հետ  
նա ստեղծեց դեմոկրատական և ազգային ձեռվ հայ  
նոր պոեզիան, որ մեր հպարտությունն է, մեր փառքը:

Մեր գեղարվեստական խոսքի մեծ ներկայացու-  
ցիչների հետ միասին նա տվեց այնպիսի գոհարներ,  
որոնց նշանակությունը գուրս է զալիս հայ գրակա-  
նության ազգային շրջանակներից:

Նրա երգերի ջինջ զովացուցիչ ակունքներից խմեց  
և աճեց պոետների մի նոր սերունդ, որի մեջ նշա-  
նակոր դարձան Վ. Տերյանը և Շ. Կուրզինյանը:

Ավ. Իսահակյանի գրական խոսքի բարձր տեխնի-  
կան, նրա նուրբ ու պայծառ արվեստը մեծ դարոց է  
այսօրվա մեր պոետների համար:

Կապիտալիստական աշխարհին գեշերին մեծ բանաստեղծը տասնյակ տարիներ երազեց ու ձըգ-  
տեց գեպի արևը՝ հասարակական-քաղաքական լավա-  
գույն կարգերը: Անցնելով որոնումների հակասական  
և փշալից ուղիներով, շնորհիվ ժողովրդի հետ ունե-  
ցած սերտ, արյունակցական կատերի, նա ընդմիշտ  
դարձավ իր մայր ժողովրդի գիրկը, եկալ սոցիալիս-  
տական հայրենիք:

Եվ այժմ, որպես Սովետական հայրենիքի մեծ պո-  
ետն ու քաղաքացին, նա մասնակցում է մեր երկրի  
կուլտուրական շինարարության գործին:

Դեռ չե չորացել մեծ վարպետի վրձինը: Նա իր  
սուելծագործական գանձարանից գեռ լույս աշխարհ  
չի հանել իր բոլոր գանձերը: Մեր գրական հասարա-  
կայնությունը, մեր ժողովուրդը դեռ շատ սպասելիք-  
ներ ունեն իրենց սիրելի բանաստեղծից, նրա միշտ  
պայծառ ու մեշտ դայլայլող քնարից:

1910, գեկտեմբեր



Պատ-խմբագիր՝  
Հ. Գ. Գորջան  
Տեխ-խմբագիր՝  
Ալբունյան  
Մրագրիչ՝  
Մումանյան

Վ. 2082. Հըստ. 5401

Պատվեր 816. Տիրաժ 2000

Հանձնված և արտադրության 16/XII—1940 թ.

Ստորագրված և տպագրության 21/XII—1940 թ.

Հայպետհրատի տպարան, Երևան, Լենինիք, 65



69.859